



ՀԱՅՈՒԹԵՐ  
ԱՏԵԽԱՐԱԿԱՆ  
ՀԱՅՈՒԹ  
ԱՐԴԱՐԱԿԱՆ

ԽԹ. ՏԵՐԻ

1975



# ԱՅՆ

Խթ. ՏՈՐՏՈՉԱՆ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ  
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

1975  
1975

Յունիս - Յուլիս  
June - July


Թիւ 6 - 7  
No. 6-7

# S I O N

VOL. 49


A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY  
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem  
Editor-in-chief: Archbp. Shahe Ajamian Editor: Ara Kalaydjian



St. James Press  
Jerusalem





## Յ Ա Ն Ո Ւ Ն

### ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՒ ԵՒ ՄՇԱԿՈՅՑԹԻ

ՀԱՅ ԵՐՈՒՍԱԼԵՄԸ, իր 1500ամեայ պատմութեան ընթացիմ ժիշտիս անգամ տեսած է փառաւորութեան և կրուանիքի այնախսի օրեր, որոնիք յատկանշեցին Հայաստանեայց Ս. Եկեղեցիի Պետին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետի Ս. Քաղաք տրամադ շնորհաբեր այցելութիւնը, Յունիս 22էն 1 Յուլիս։ Այդ շեղութեան յատելուածական փայլը կազմեց Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ն. Ամեն. Տ. Շնորհ Ս. Արքեպոս. Գալուստեանի ալ ներկայութիւնը երուսաղէմի մէջ։

Շնորհաբեր այդ այցելութեան եօրնօրեակը, որ իրաւամբ հոչակուեցաւ որպէս «Հայկական շաբաթ երուսաղէմի», անգամ մը ևս փաստեց — և այնքան փառաշուր կերպով — հայկական ներկայութեան կարևորութիւնը Սրբազն Քաղաքին և Սրբատեղիներուն մէջ։ Ու ասիկա շրջանի մը, երբ համայն մարդկութեան ու շադրութեան և մտահոգութեան առարկան դարձած է երուսաղէմը։ Վեհափառ Հայրապետին եղած բոլոր յարգանիներն ու մեծարանիները, Ն. Ս. Օծութեան անձին միջոցաւ պատուեցին Հայաստանեայց Ս. Եկեղեցին, Հայ ժողովուրդը և երուսաղէմի Ս. Արքունը, որ վեռական դեր մը ունեցած է Սրբատեղիներու ամադարու և ապահով պահպանումի ծանր ու դժուարին առափելութեան մէջ։

Միաժամանակ, Հայաստանեայց Ս. Եկեղեցիի Պետին, ինչպէս նաև աշխարհի չորս կողմերէն եկող Հայ կրօնական իշխանաւորներու ներկայութիւնը երուսաղէմի մէջ, առիր մը ևս ընծայեց շեշտելու նշանակութիւնը այն դերին՝ զոր մեր Եկեղեցին ունի ներկայ օրերու էկումենիկ շարժումին մէջ։ Արդարի, քրիստոնէութեան օրբանին՝ Սուրբ այս Քաղաքին քրիստոնէայ զանական համայնքներու պետերուն հետ Ն. Ս. Օծութեան և իր հետեւորդներուն ունեցած տեսակցութիւնները անցան աննախընթացօ-

րէն ջերմ և անկեղծ, ստեղծելով քրիստոնէական սիրոյ և եղբայրութեան հիմնալի մքնորու մը:

Եւ սակայն, վեհափառ Հայրապետի այցելութիւնը, վերոյիշեալ իր լայն հանգամանեմէն անկախ, յատուկ նշանակութիւն մը ունեմէք Հայաստանեայց Ս. Եկեղեցին և Հայ ժողովուրդին համար: Նորին Ս. Օծութիւնը Հայ Եկեղեցին այն բացառիկ Պետն է, որ իր նախորդներէն տարբեր՝ բանամեայ իր զահակալութեան ընթացքին բացում ուղևորութիւններ կատարած է դէպի արտասահմանի գրեթէ բոլոր երկիրները, անձամբ տանելու Հայ զանգը ածնեներուն Ս. Լուսաւորչի Արոռին հիմայքն ու վիրածաղկեալ Հայաստանի ուրախութիւնը: Եթէ, այսպիսով, քարձագաւ հիմայքը Ս. Էջմիածնի, միւս կողմէ Հայ զանգուածներուն մէջ ուռնացաւ հաւատքը մեր նախահայրերուն, նոր խանդ ու խանդավառութիւն ստեղծուեցաւ բոլոր համայնքներէն ներս: Իր անձնաւորութեան ու Ս. Էջմիածնի անխորտակելի և բացառիկ բաշողութեամբ, Ն. Ս. Օծութիւնը բոլոր Հայերուն ներշնչեց ուժ, հաւատք և Հայ ապրելու կամք այնպիսի օրերու, երբ արտասահմանը կ'անցնէք նզնաժամային վիճակէ մը, ինքզինք գտնելով իր Հայ ինքնութիւնը պահելու կամ վերջնականօրէն կորսնցնելու երկնետրանին առջի:

Երուսաղէմի Ս. Արոռը Հայաստանեայց Եկեղեցին գերազոյն Պետին հոգածութեան և ուշադրութեան առարկայ եղաւ շատ կանուխ, որովհետև Ն. Ս. Օծութիւնը, իրեն յատուկ խորաքափանցութեամբ շատ շուտ գիտակցեցաւ այն վեռական դերին զոր Ս. Քաղաքի Հայ Պատրիարքութիւնը ունետք և տակաւին պիտի ունենար արտասահմանի հոգեւոր ու կրթական կեանքին մէջ: Դարերէ ի վեր առաջին անգամ ըլլալով 1963ի Հոկտեմբերին Հայ Եկեղեցիի Պետ մը Երուսաղէմ կ'այցելէր, յաշու օտարներուն շեշտելու դիրքն ու առանձնաշնորհները Երուսաղէմի Ս. Արոռին, և պաշտօնապէս բանալու քրիստոնէութեան մեծազոյն սրբավայրին՝ Ս. Յարութեան Տաճարին մէջ հայկական բաժիններու նորոգութիւններու շրջանը, որ պիտի տևէր աւելի բան տասնամեակ մը: Ստեղծուած խանդավառութեան հետևանքով էր գլխաւորաբար որ կարելի դարձաւ իրազորդել բազմածախս և անդուլ նիզի ու աշխատանքի կարօտ այդ նորոգութիւնները՝ որոնք հիմնովին բարեփոխեցին Տաճարին ներս հայկական բաժինները, այսօր հիացում առելով հայ քէ օտար բոլոր հաւատացեալներուն և այցելուներուն:



Սակայն Սրբոց Յակոբեանց Վանքը, պատմական Սիոն լեռան վրայ, ըլլալով հանդերձ կեդրոնը Հայ Եկեղեցին նուիրապետական Արոռներուն կարևորագոյններէն և հնագոյններէն մէկուն, եղած է նաև Հայ մշակոյթի օնախ մը, ուր շեշտը դրուած է մասնաւորաբար կրթականին վրայ: Պատմութեան մշուշին մէջ կը կորսուի քելը Վանքէն ներս մշակութային գործունեութեան. աւերներէ և սարսափներէ քրիուած ձեռագիրներու յիշատակարաններ կը խօսին դարերու վրայ երկարող գրչագրական կարևոր գործունեութենէ մը. «յոտս վարդապետաց» իրենց կրութիւնը ստա-

ցող արեղաներ Երուսաղէմը դարձուցած են Հայ Եկեղեցիի Ռւդղափառութեան ամբոց մը, պահապան՝ մեր Սուրբ Հայրերէն աւանդուած հաւատամֆին և դաւանդութեան։ Եւ այս բոլորը իրենց լրումը գտած են ԺԹ դարու առաջին կէսին, երբ, 1833ին, առաջինը ըլլալով Սուրբ Երկրին մէջ, հիմնուած է Ս. Յակոբեանց Տպարանը, իսկ տասնամեակ մը եսք՝ Ժառանգաւորաց Վարժարանը. զոյզ հաստատութիւններ, որոնց անխափան գործունեութիւնը մինչև ներկայ օրերը մեծ դեր մը ունեցած է Հայ Եկեղեցիի ու Հայ ժողովուրդի կեանքին մէջ։

Այդ դերին կարևորութիւնը շեշտուեցաւ մասնաւորաբար Համաշխարհային Առաջին Պատերազմէն ետք, երբ Երուսաղէմի Ժառանգաւորացը զրեթէ միակն էր Հայ իրականութեան մէջ՝ Հայատանեայց Եկեղեցիի պատրաստուած և զարգացած ծառայողներ ընծայելու մարզին մէջ։ Եւ 1921ին Վերաբացուող Ժառանգաւորաց Վարժարանը իրեն վստահուած այդ սրբազն պարտականութիւնը կատարեց պատուարեր յաջողութեամբ, յանախ նիւթական ամենէն դժուար պայմաններու մէջ։

Արտասահմանի մէջ մասնաւորաբար վերջին տասնամեակին տեսնուող ազգային վերազարքնումի և ինքնազիտակցութեան շարժումին իրեւ հետևանք, ամէն կողմէ պահանջէք զգացուեցաւ ունենալու ուսումնական այնպիսի կեդրոն մը, ուր հայագիտութեան ուսուցումը դրուէր ամուր և գիտական հիմերու վրայ, և ուր պատրաստուէին արտասահմանի Հայութեան կրօնական թէ աշխարհական առաջնորդներն ու կրթական գործիչները։ Եւ, շատ հրաւացի կերպով, բոլորին աշխերը յառեցան Երուսաղէմին, ուր միայն կրնար իրականութիւն դառնալ նման ծրագիր մը։ Հայ Երուսաղէմը, իր վայելած առանձնաշնորհներով և իրաւունքներով, Ս. Յակոբեանց վանքի զանազն հաստատութիւններուն ընձեռած ընդարձակ կարելիութիւններով, կրթական մէկդարեայ փորձառութեամբ և աւանդութիւններով՝ իտէալ մթնոլորտը ունի այսպիսի ծրագրի մը հովանաւորողն ու միաժամանակ գործադրողը ըլլալու։

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ցիեանը Նախագահին՝ Վսեմ. Տիար Ալեքս Մանուկեանի իշխանական նուիրատուութեամբ էր որ կարելի եղաւ կառուցանել Ս. Յակոբեանց Վանքի մայր մուտքին դիմաց գտնուող հայապատկան թեդարձակ հողամասին վրայ կրթական այս հեռահայեաց ծրագիրը իրազործելու կոչուած Դպրեվանքի նոր ու հիանալի շէնքը, որ ի պատիւ Բարեբարին կոչուեցաւ «Ալեքս և Մարի Մանուկեան Ժառանգաւորաց Վարժարան»։ Վսեմ. Նախագահին կատարած քազում քարեբարութիւններուն մէջ, Երուսաղէմի նորակառոյց Դպրեվանքը եզակի տեղ մը կը բռնէ անով՝ որ հոն կը կեդրոնանան արտասահմանի Հայութեան բոլոր ակնկալութիւնները. անոր վրայ՝ իրեւ միակ կէտի՛ կը հաւաքուին ու կ'ուռնա-

նան բոլոր յոյսերն ու սպասումները։ Այս կը փաստէ այն խանդավառութիւնը որ ստեղծուեցաւ Դպրեվամբի պաշտօնական բացումով, ձեռամբ Ազգիս Վեհափառ Հայրապետին և ի ներկայութեան Բարերար ամոլիին՝ Վսեմ։ Տէր և Տկն. Ալեքս Մանուկեաններու, բազմահարիւր եիրերու և հազարաւոր ներկաներու։ Արտասամանի մամուլը նոյն ակնկալու ուրախութեամբ անդրադարձաւ այս շատ կարևոր դեպքին, միշտ շեշտելով թէ Հայ Երուսաղէմէն կը սպասուէր պատրաստութիւնը հոգեւոր և ազգային երիտասարդ գործիչներու։

Եթէ նորակառոյց «Ալեքս և Մարի Մանուկեան Ժառանգաւորաց Վարժարան»ի հանդիսաւոր պայմաններու մէջ պաշտօնական բացումը հոգեկան անխառն գոհունակութիւն և բերկրանք կը պատճառէ անզուգական Բարերարին, միւս կողմէ բարոյական ծանր այլ բաղցը պարտաւորութեան կ'ենթարկէ Երուսաղէմի Հայ Պատրիարքութիւնը. պարտաւորութիւն՝ զոր Ս. Յակոբեանց Միաբանութիւնը միշտ ունեցած է իր վրայ և զոր իր նուիրուած գահակալներուն հովանաւորութեամբ պատուով ու բացառիկ զոհողութիւններով իրագործած է առանց ընդմիջումի։

Բայց Ս. Յակոբեանց դարաւոր այս Հաստատութեան կրօնական, կրթական, ինչպէս նաև շինարարական կեանքը մեծագոյն մղում մը ստացաւ Ս. Արոնիս ներկայ Գահակալին՝ Ն. Ամեն. Տ. Եղիշէ Ս. Արքեպոս. Տէրտէրեանի պատրիարքութեան շրջանին. շրջան՝ որ կը յատկանշուի բոլոր մարզերու մէջ եռուն գործունեութեամբ և անդուլ նիգով։ Հեռատես ծրագրումով և չընկրկող կամքի ուժով, Ն. Ամենապատուութիւնը իր պատրիարքութեան տասնինգամեայ շրջանը վերածած է Ս. Արոնիս բազմադարեան կեանքի ամենէն փայլուն ժամանակամիջոցներէն մէկուն, պսակուած յաջողութիւններով և անբնդմէջ զարգացումով։ Իբրև տասնամեակներու կրթական մշակ և դաստիարակ, Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հօր հոգածութեան զլխաւոր և առաջին առարկան հանդիսացած են Ժառանգաւորացը և Ս. Արոնիս Ս. Թարգմանչաց Նախակրթարանն ու Երկրորդական Վարժարանը, որոնց բարօրութեան համար ո'չ մէկ զոհողութեան առջև կանգ առած է։

Եւ այսօր, Ս. Յարութեան Տանարի վերանոգուած հայկական բաժինի և «Ալեքս և Մարի Մանուկեան Ժառանգաւորաց Վարժարան»ի հայրապետական օրինութեամբ բացումներէն ետք, Երուսաղէմի Հայ Պատրիարքութիւնը աւելի բարեք հոգեպէս զօրացած, ի վիճակի կը զգայ ինքզինք վերանորոգուած եռանդով շարունակելու իր սրբազն առաքելութիւնը, յանուն Հայաստանեայց Սուրբ և Առաքելական Եկեղեցիի և Հայ մշակոյթի։



## Ն. Ս. ՕՇՈՒԹԻՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ ԱՐԱԶԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱԲԵՐ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԵՄ

• • •

Անդամ մը ևս Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց գարաւոր հաստատութիւնը, զինուորեալ Միարանութիւնը և Սուրբ Երկրի Հայութիւնը ցնծութեան և քերկրանքի օրեր ապրեցան, երբ, 20 Յունիսին մինչև 1 Յուլիս 1975, անոնք երկրորդ անգամ ըլլալով ընդունեցին Հնորհարեր այցելութիւնը աղջիս մեծարեալ Հայրապետին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Առաջին Վեհափառ կաթողիկոսին:

Նորին Սուրբ Օծութիւնը առաջին անդամ Երուսաղէմ այցելած էր 1963 Հոկտեմբերին, Համայն քրիստոնէութեան զիխաւոր սրբավայրին՝ Սուրբ Յարութեան Տաճարին Հայկական բաժինի նորոգութեան աշխատանքները հովանաւորելու և Համազային Յանձնախումբ մը նշանակելու Համար:

Տասներկու տարիներ ետք նորին Վեհափառութիւնը կը վերադառնար Սուրբ Երկիր, ուրախառիթ գոյց պատեհութիւններով:

Նախ՝ կատարելու պաշտօնական բացումը Ալեքս և Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարանի նորակառոյց զեղեցիկ չէնքին, որ այժմ իրրե Հայկական փառաւոր կոթող կը բարձրանայ Սիսոն լեռան վրայ, Ս. Յակոբեանց Վանքի մուտքին դիմաց, և առա նաւակատիքը և օծումը ընելու Ս. Յարութեան Տաճարի Հայրապատկան նորոգուած խորաններուն:

Ամիսներ առաջ արդէն, Միարանութիւն և Ժողովութզ, Ամեն. Տ. Եղիշէ Ս. Պատրիարք Հօր զիխաւորութեամբ, անհրաժեշտ աշխատանքներուն ձեռնարկած էին, Վեհափառ Հայրապետին այս երկրորդ այցելութիւնը ընելու փառաւոր և յիշատակելի՝ Երուսաղէմի Հայրաբանայ պատմութեան մէջ:

Պատրիարքարանի Հովանաւորութեամբ կազմուած էր Երուսաղէմի գաղութը ներկայացնող Հայ Միութիւններու ներկայացուցիչներէն բաղկացած Յանձնախումբ մը: Այդ կաղմակերպութիւններն էին. Երուսաղէմի Հայոց Բարեհիսրական Միութիւնը, Հայ Երիտասարդաց Միութիւնը և Հայ Մարմակըրթական Ընդհանուր Միութիւնը: Յանձնախումբին առաջին զործը եղած էր կազմէլ Համամիութենական երգչախումբ մը՝ մասնակցելու բոլոր Հանդիսութիւններուն և կրօնական արարողութիւններուն: Գործի լծուած էր նաև պարախումբը, և զրեթէ ամէն երեկոյ Վանքը կը լեցուէր զանազան փորձերու եկող խանդավառ Հայերոյ և Հայուհիներով: Յանձնախումբին պարտականութիւն յանձնուած էր նաև Ն. Ս. Օծութիւնը զիխաւորոյ յաղթական կամարներ կանգնեցնել և պատրաստել մեծատառ և բազմալեզու լոգունդներ՝ Վեհափառ Հիւրին բարի գալուստ մաղթող:

Մինչ այդ, արդէն ամիսներ առաջ Պատրիարքարանին կողմէ հրաւերներ ուղղուած էին Հայաստանեաց Եկեղեցւոյ բարձրաստիճան անդամներուն, ինչպէս նաև Ս. Աթոռիս բարերարներուն ու բարեկամներուն՝ ներկայ ըլլալու երուաղէմի մէջ կատարուելիք Հանդիսութիւններուն և անդամ մը ևս լիցուելու Վեհափառ Հայրապետի շնորհարաշուներկայութեամբ։ Նոյն սիրալիք հրաւերը, հայ թերթերու մէջ հրատարակուած հետևեալ պաշտօնական Հազորդագրութեամբ մը, ուղղուած էր արտասահմանի բոլոր Հայերուն անխոտիք։

«Ի գիտութիւն մեր բարեպաշտ ժողովուրդին կը ծանուցանենք թէ Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Կազգէն Սուաջին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը շնորհաբեր այցելութեամբ Երուաղէմ պիտի ժամանէ Կիրակի, Յունիս 22 1975ին։

Այս պատեհութեամբ Երուաղէմ պիտի այցելէ Եաւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ցկեան Նախագահ Վսեմ. Տիար Ալեքս Մանուկեան։

Չորեքշաբթի, Յունիս 25-ին մեծահանդէս բացումը պիտի կատարուի Ալեքս և Մարի Մանուկեան Ժառանգաւորաց Կարժարանի և Ընծայարանի նորակառոյց շենքին։ Խոկ Շաքաթ և Կիրակի, Յունիս 28 և 29, պիտի կատարուի Սուրբ Յարութեան Տաճարի Եաւակատիքը, և Վեհափառ Հայրապետը պիտի օծէ նորակառոյց հայկական խորանները։

Այս ուրախ առիթով կը հրաւիրենք հաւատացեալ Հայ ժողովուրդը մասնակցելու վերոյիշեալ հանդիսութիւններուն և կատարելու ուխտը Քրիստոսակոյն սրբավայրերուն մէջ։»

Նոյն շրջանին տպուած էին Վեհափառ Հայրապետին մեծադիր լուսանկարները, որոնք Երուաղէմի հայ խանութներուն և այլ Հաստատութիւններու ցուցաֆեղկերը կը զարգարէին Ս. Էջմիածնի նկարներուն հետ։ Տպուած էին նաև Ն. Ս. Օծութեան Երուաղէմ այցելութեան ժամանակացոյցները և բաժնուած զաղութին բոլոր անդամներուն։ Կատարուելիք Հանդիսութիւններուն և պաշտօնական ընդունելութիւններուն ժամանակցելու հրաւիրագիրներ ուղղուած էին Երուաղէմի պետական, հիւպատոսական և կրօնական բոլոր մարմիններուն և Հաստատութիւններուն։

Այս բոլոր պատրաստութիւնները տևանուած էին արդէն, երբ Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, ի գլուխ Միաբանութեան անդամներէն բաղկացած պատուիրակութեան մը, Ուրբաթ, 20 Յունիս 1975, մեկնեցաւ Ամման՝ զիմանցուրելու Վեհափառ Հայրապետը։

#### ԺԱՄԱՆՈՒՄ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Իրեն ուղղուած ժամանաւոր հրաւերին ընդառաջելով, Չորեքշաբթի, 18 Յունիս 1975, գիշերուան ուշ ժամուն Ս. Աթոռ ժամանեց Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ն. Ամեն. Տ. Շնորհաք Արքեպոս. Գալուստեան, պոլսարնակ Հաւատացեալներու խումբի մը հետ, և ուղղակի առաջնորդուեցաւ իր ընակացր՝ ժառանգաւորաց Վարժարանի Տեսչական յարկարաժինը, յատկապէս պատրաստուած և նորոգուած իրեն համար։

Յաջորդ օր, Հինգշաբթի, 19 Յունիս 1975, առաւտական ժամը 10·30-ին, Մայրավանքի զանդին զօղանջինով, Ն. Ամենապատութիւնը «Հրաւագափառ» և Ս. Յակոբեանց Միաբանութեան ու ժառանգաւորներուն հետևողութեամբ մուտք գործեց Տաճար, ուր նախ Ս. Գլխազիրի մատուախն մէջ իր ուխտը կատարեց, ապա յառաջանալով գէպէ Եկեղեցին դասը, խօսք առաւ և զո-



Ա. Ս. ՕԾՈՒԹԵԻՆ Տ. Տ. ԿԱԶԳԵՆ ԱԽԱԶԻՆ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵԼԱՅՆ ՀԱՅՈՑ

հութիւն յայտնեց Աստուծոյ որ իրեն անզամ մը ևս պատեհութիւն չնորհած էր դանուելու և աղօթելու Տիրոջ և Հայութեան այս փառաւոր Տունին մէջ։ Ան յորդորեց ներկայ հաւատացեալները անսակարկ նուիրումով ծառայելու դարաւոր այս Հաստատութեան, որ Հայութեան պարծանքն է :

Յետոյ, Ս. Աթոռիս «Օքնեցէք զՏէր» շարականի երգեցողութեամբ և թափօրով, Ն. Ամեն. Տ. Շնորհք Պատրիարք բարձրացաւ Պատրիարքարան, ուր, գահին ունի ողջագուրուեցաւ Ն. Ամեն. Տ. Եղիշէ Պատրիարք Ս. Հօր Հետ։ Կարձ հանդիսատէ մը ետք, նախ բարի գալուստի խօսք առաւ Ս. Աթոռիս զահակալը, և կրկնելէ ետք Սաղմոսէրգուին արտայատութիւնը՝ «Զի քաղցր է զի բնակեսցին եղբարք ի միասին», յայտնեց թէ ընտանիքներու նման, Հայ Եկեղեցիի մեծ ընտանիքի անդամներուն միջն ևս երեմն թիւրիմացութիւններ կը պատահին, սակայն էականը այն է որ այդ անհասկացողութիւնները հարթուին, և միութիւնն ու համերաշխութիւնը տիրեն։ Ապա Ն. Ամենապատուութիւնը յիշեց թէ ինչպէս դարերու ընթացքին Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը թե ու թիկունք կանդնած էր Երուսաղէմի Ս. Աթոռին, և վերջացուց իր խօսքը՝ դարձեալ բարի գալուստ մաղթելով Սրբազն և Ամենապատիւ իր եղբօր։

Իր պատասխան արտայատութեան մէջ, Ամեն. Տ. Շնորհք Պատրիարքը ևս անդրադարձաւ քիչ մը տիսւը անցեալին, յոյս յայտնեց որ այդ անցեալը պիտի մոռցուէր և զոհացաւ որ ասիթն ու պատեհութիւնը պիտի ունենար ականատես ըլլալու շինարարական այնաշխատանքներու արդիւնքին՝ որ Ս. Աթոռի Ամեն. Գահակալը և Միաբանութիւնը իրագործած էին վերջին մէկուէս տասնամեակին։ Ապա Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հօր նուիրեց Երուսաղէմը նկարագրող պատկերազարդ հին ու թանկագին հատոր մը։

### ԺԱՄԱՆՈՒՄ ՀԻՒՐԵԲՈՒ

Ուրբաթ, 20 Յունիս 1975, առաւօտեան, Խորայէլի Պեն Կուրիօն օդակայան հասնելով Ս. Աթոռ ժամանեց Խումանիոյ և Պուլկարիոյ Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Տիրայր Եպս. Մարտիկեան, ներկայ ըլլալու կատարուելիք հանդիսութիւններուն։

Նոյն զիշեր, դարձեալ Պեն Կուրիօն օդակայանէն Ս. Աթոռ ժամանեց Գերշ. Տ. Պատկ Արքեպս. Թումայեան (Լուսոռն)։

Միաժամանակ, վերջին շարթու ընթացքին, արտասահմանի զանազան կողմերէն հիւրեր սկսած էին հասնիլ Երուսաղէմ։

Այսպէս, Շարաթ, 21 Յունիս 1975, զիշերը, Նիւ Եորքէն զալով Պեն Կուրիօն օդակայան կը ժամանէր բարերար Մեծայարդ Տիար Տատուրեան, իսկ յաջորդ օր, Կիրակի, 22 Յունիս 1975, դարձեալ զիշերը և միենոյն ճամբով Երուսաղէմ կու գար Մեծայարդ Տիար Սթիլ Մուկար, Ամերիկահայ այցելուներու խումբով մը։

### ԺԱՄԱՆՈՒՄ ՎԵՀԱՓԱՄ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՄՄԱՆ

Ն. Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետը Ամմանի օդակայան ժամանեց Ուրբաթ, 20 Յունիս 1975, երեկոյեան ժամը 7-ին։ Օդակայանին մէջ զիշմաւորութեան եկած էին Ամեն. Պատրիարք Ս. Հայրը իր պատուիրակութեամբ, Յորդանանի պետական ներկայացուցիչները, Ամմանի Սովետական Դեսպանատան կազմը և Ամմանահայ զաղութիւններ։

Սարսուր մը անցաւ ներկաներու մարմիններէն, երբ օդանաւի դրան

մէջ երկցաւ ազգիո մէծարեալ Հովուապետը, տալու իր Հայրապետական օրհնութիւնը բոլորին :

Ն . Ս . Օծութեան կ'ընկերանային Արևմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ և Ֆրանսահայոց Առաջնորդ Գերշ . Տ . Սերովրէ Արքեպոս . Մանուկեան , Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արևելեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ . Տ . Թորգոն Արքեպոս . Մանուկեան , Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արևմտեան Թեմի Առաջնորդ Գերշ . Տ . Վաչէ Եպոս . Յովսէփեան , Արարատեան Թեմի Առաջնորդ Գերշ . Տ . Կոմիտաս Արքեպոս . Տէր Ստեփանեան , Գերշ . Տ . Սիոն Արքեպոս . Մանուկեան , Վեհափառ Հայրապետի գաւաղանսկիր Հողչ . Տ . Անանիա Արդ . Արարածիան , «Էջմիածին» պաշտօնաթէրթի խմբագիր Տիար Արթուն Հատիտեան և Գերազոյն Հողեոր Խորհուրդի անդամ , արուեստագէտնկարիչ Տիար Գրիգոր Խանջեան :

Սրտագեղ ողջագուրումներէ ետք , Վեհափառ Հայրապետը առաջնորդուեցաւ օգակայանի հանգստեան սրաշը , ուր կարճ դադարի մը ընթացքին Ն . Ս . Օծութիւնը հիւրասիրուեցաւ և տեղական թղթակիցներու հետ հարցազրոյց մը ունեցաւ :

Ապա , Յորդանանի Վեհափառ Թաղաւորին կողմէ տրամադրուած շրքեղ ինքնաշարժով Ն . Ս . Օծութիւնը շքախումքին ուղեկցութեամբ ճամբայ ելաւ դէպի Ամման , և անցնելով մայրաքաղաքի փողոցներէն հասաւ իր հանգստավայրը՝ Օրտոն պանդոկը :

Նոյն երեկոյ , կարճ հանգիստէ մը ետք , Վեհափառ Հայրապետը , ընկերակցութեամբ Ամմէն . Պատրիարք Ս . Զօր և շքախումքի անդամներուն , ինչպէս նաև Ամմանահայ զաղութին ներկայացուցիչներուն , ներկայ եղաւ Ամմանի Սովետական Դեսպաննին կողմէ Դեսպանատան մէջ ի պատիւ իրեն տրուած ընդունելութեան , որ անցաւ ջերմ և խանգամառ մթնոլորտի մը մէջ :

Յաջորդ օր , Շաբաթ , 21 Յունիս 1975 , առաւօտեան ժամը 11-ին , Ն . Վեհափառութիւնը այցելեց Հաշմական Տան հանգուցեալ թագաւորներ Ապտալլայի և Թալալի շիրիմները , և ապա , Վեհափառ Հիւսէյն թագաւորի բացակայութեան , ընդունեցաւ Գահաժառան՝ Ն . Վահմ . Հասան Իշխանին կողմէ : Ընդունելութիւնը անցաւ շատ ջերմ և անկեղծ , և երկուստեք եղան սիրալիր արտայայտութիւններ :

Նոյն դիշեր , ժամը 9-ին , Ն . Ս . Օծութիւնը իր հետեւրդներով Ամմանի Հիւսէյն մարզական շքեղ աւաննին մէջ հիւրը եղաւ Ամմանահայութեան , որ գեղեցիկ ճաշկերոյթով մը ուղած էր պատուել Հայութեան ամենասիրելի Հայրապետը : Ներկայ էին նաև պետական և Սովետական Դեսպանատան ներկայացուցիչներ : Խօսք առին Ամմէն . Պատրիարք Ս . Հայրը և Ամմանահայութեան Հոգեւոր Հովիլ Հողչ . Տ . Անուշաւան Վրդ . Զղջանեան :

Ամեն . Պատրիարք Ս . Հայրը ողջունելէ ետք Վեհափառ Հայրապետը , ըստ որ ան իր անձին մէջ կը մարմնացնէր Ս . Էջմիածնի ողին ու Հայրենիքի սէրը , և Հրափերեց Ն . Ս . Օծութիւնը բաշխելու իր օրհնութիւնն ու պատղամը ներկաներուն :

Խօսք առնելով , Վեհափառ Հայրապետը յայտնեց թէ իր հետ կը բերէր սէր և օրհնութիւն Մայր Հայաստանին և Ս . Էջմիածնէն : Ն . Ս . Օծութիւնը անդրադարձաւ Ս . Էջմիածնի դերին և կարեւորութեան , խօսեցաւ Հայ ժողովուրդի հաւաքական ճակատագրէն , և վստահեցուց ներկաները որ վճռական որևէ պահու , Հայաստան և Սփիւռք մէկ սիրտ են և մէկ հողի :

Գեղեցիկ այս ճաշկերոյթը անցաւ բացանիկ խանդալառութեան մէջ :

## ՊԱՏԱՐԱԳ ԱՄՄԱՆԻ Ս. ԹԱԴԵՈՍ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԵԶ

Հոգեգալստեան տօնին առիթով, եպիսկոպոսական հանդիսաւոր Սուրբ Պատարագ մատուցուեցաւ Ամմանի նորակառոյց Ս. Թադէոս եկեղեցին մէջ, ի ներկայութեան Ամերիկահայ բարերար ամոլլին՝ Տէր և Տկն, Յարութիւն և Աղաւնի Թաղուեաններու: Պատարագին էր Ս. Աթոռոյ Դիւանապետ Գիրշ. Տ. Շահէ Արքեպոս. Աճէմեան: Ս. Պատարագէն մաս մը, ինչպէս նաև Վեհափառ Հայրապետին պատղամը ձայնասփուեցան Ամմանի առտիոկայանէն:

Ժամը 9.30-ին ազգիս Վեհափառ Հայրապետը հանդիսաւոր մուտք դործեց Եկեղեցի: Մուտքին, ան զիմաւորուեցաւ տեղույն Ազգային Վարժարանի ուսանողներէն և գաղութի դրեթէ բոլոր անդամներէն, և ի պատիւ իրեն՝ սիրոյ ու խաղաղութեան նշանակ աղաւնիներ արձակուեցան:

«Ողջոյն»ի պահուն, պատարագին Ս. Հօր Հրաւէրով Ս. Խորան բարձրացաւ Ն. Ս. Օծութիւնը, և անդրագառնալէ ետք Հոգեգալստեան տօնի խորհուրդին, տուաւ իր սրտառուչ պատղամը ներկաներուն:

\* \* \*

Ն. Ս. Օծութիւն Վեհափառ Կաթողիկոսի Ամման այցելութեան լայնօրէն և դրուատական արտայայտութիւններով անդրագարձան Յորդանանեան պատիոկայանը, հեռատեսիլը և բոլոր թերթերը:

## ԺԱՄԱՆՈՒՄ ՎԵՀԱՓԱԾՈ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՐՈՒՍԱԼԵՄ

Կիրակի, 22 Յունիս 1975, կէսօրէ ետք ժամը 3-ին, զինուորական ինքնաշարժներու առաջնորդութեամբ ընթացք առաւ Վեհափառ Հայրապետին զլխաւորած շքերթը դէպի Յորդանան գետի Ալէնապի կամուրջը, ուր, սահմանազութին վրայ պատիւներու արժանացաւ հրամանատարութեան կողմէ: Ն. Վեհափառութեան կ'ընկերանային Ամմանահայութենէն մէծ թիւով ազգայիններ:

Պաշտօնական կարճ ձեւակերպութիւնները լրանուով, Ն. Վեհափառութիւնը ճամբայ ելաւ դէպի Ս. Քաղաք: Սահմանագլուխ զիմաւորութեան եկած էին Ս. Երկրի Հայութենէն բազմահարիւր ազգայիններ, իրենց ինքնաշարժներով, որոնք այս ձեռով միացան արդէն իսկ պատկառելի շքերթին:

Մինչ այդ, Երուսալէմի Յուպպէի Դուռը տօնական հանդիսաւոր կերպարանք զգեցած էր: Հազարաւոր Հայ թէ օտար հաւատացեալներ կը լցնէին Յուպպէի Դուռէն դէպի Ս. Յակոբեանց Վանք առաջնորդող ճամբան, մինչ պետական, հիւապատոսական և կրօնական ներկայացուցիչներ կը սպասէին Դրան մուտքին իրենց հետերդներով և բարապաններով:

Կարգապահութեան կը հոկէին Երուսալէմի Հայ միութիւններու արիարենուչները, իսկ ամբողջ տեսարանին փայլ մը կու տար Հ. Ե. Միութեան փողերախումբը: Քիչ մը վեր, Դաւիթի Բերդին առջև բարձրացած էր ծաղկազարդ առաջին յաղթական կամարը, որուն վրայ պարզուած հոկայ լողունդը անդենէնով բարի գալուստ կը մաղթէր Վեհափառ Հայրապետին: Նոյն ողջոյնը կը կրկնուէր երեք լեզուներով՝ երբայերէն, արարերէն և հայերէն, մինչեւ մայրավանքի մուտքը:

Հետզհետէ բարձրացող և Երուսալէմի յատուկ երեկոյեան զիմիւոին ազգացութեան տակ դրօչակները կը ծածանէին, իսկ հաւաքուած բազմութիւնները անհամբեր Հայոց Հայրապետին ժամանման կը սպասէին:

ի վերջոյ, ժամը 5.30-ին, Ն. Վեհափառութիւնը իր չքախումբով հասաւ Յոպպէի Դուռ, ուր քննդումնեցաւ պետական, Հիւպատոսական և կրօնական ներկայացուցիչներու կողմէ։ Տասնեակներով ճերմակ տատրակներ արձակուեցան, որոնք երկար պահ մը սաւառնեցան Վեհափառ Հայրապետին և ներկաներուն վերե, ուրախութեան ճիշեր խլելով բոլորէն։ Բարի զալուստի ջերմ խօսքերով Հանդէս եկաւ կրօնից նախարարութեան ներկայացուցիչ Պրն. ի. Կիրրըլ, որ ըսաւ թէ Հայերու ներկայութիւնը Ա. Քաղաքին մէջ շատ հին է



Տեսարան մը ծովածաւալ քագմութենէն։

և կ'երթայ մինչև քրիստոնէութեան առաջին դարերը։ Երուսաղէմի անունով բարի զալուստ մաղթեց Քաղաքապէտ Ն. Վասմ. Թէտի Քոլէք։ Ապա ջերմ արտայարութիւններուն չնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Հայրապետը։

Ցեսոյ կազմուեցաւ փառաւոր ու շքեղ թափօրը, զլխաւորութեամբ ազգիս սիրելի Հայրապետին, և մասնակցութեամբ Գերշ. Արքազաններու, Հոգ. Հայրերու, Մարկարագներու, Ժառանդաւորներու և երգչախումբին։

Վեհափառ Հայրապետը իր աջին և ձախին ունի Երուսաղէմի և Թուրքիոյ Ամենապատիւ. Պատրիարքները, բոլորն ալ չքեզօրէն զգեստաւորուած թանկադին հանդերձներով : Թափօրը կ'առաջնորդէն արհաւրենուշները, իսկ թափօրին կը հետեւին պետական, հիւապատոսական և կրօնական ներկայացուցիչները և ծովածաւու բազմութիւն մը : Դէպի Ս. Յակոբեանց Վանք տանող ճամրան կը լեցուի մարդկային հոսանքով, և թափօրին յառաջապահները արդէն մայ-



Հանդիսաւոր քափօրը կ'ուղղուի դեպի Ս. Յակոբեանց Վանք :

բավանք հասած են, մինչ բազմութիւնը տակաւին նոր կը հասնի Դաւիթի Բերդ : Ամէն կողմ ցնծութիւն է և երջանկութիւնը կը ցոլայ տեղացի թէ հիւր Հայ Հաւատացեալներու դէմքերէն :

Վեհափառ Կաթողիկոսը մուտք կը գործէ Ս. Յակոբեանց Տաճար, ուր, Ս. Գլխազդի սրբավայրին մէջ իր հայրապետական ուխտը կատարելէ ետք, կը բարձրանայ Աւագ Խորան ու կը բազմի յատկապէս զետեղուած դա-

հին վրայ, իր կողքին ունենալով երկու Ամեն. Պատրիարք Մբրաղանները : Ս. Աթոռիս Գահակալին Եղայրական Հրատէրով, Աւաղ Խորան կը բարձրանայ նաև Երուսաղէմի Լատին Պատրիարք Ն. Ամեն. Տ. Ճիւթօմօ Պէլթրիթի :

Տաճարը շատ շուտ կը յորդի հիւրերով և Հաւատացեալներով, երբ բարի գալուստի ամենէն անկեզծ արտայայտութիւններ կ'անենայ Տ. Եղիշէ Ա. Պատրիարքը : Ապա խօսք կ'առնէ Ն. Վեհափառութիւնը, որ Հաւատացեալներուն կը փոխանցէ ողջոյններ և օրհնութիւններ Մայր Հայրաստանէն ու Ա. Եղիածնէն, ու կը բացատրէ Ս. Երկիր իր այցելութեան նպատակը : Զերմ գոհունակութիւն կը յայտնէ սքանչելի ընդունելութեան Համար և կը մերջացնէ իր խօսքը՝ օրհնելով բոլոր ներկաները : Ապա կ'ողջագուրուի Ամեն. Պատրիարք Մբրաղաններուն Հետ, մինչ երգչախոռութեալ կ'երգէ կոմիտաս Վարդապետի Հոյակաս «Հայրապետական մաղթերդ»ը :



Ս. Յակոբեանց Տաճարին մէջ Ն. Ս. Օծութեան բարի գալուստ կը մաղքէ Ս. Արոնիս Ամեն. Պատրիարք Ս. Հայրը : Կ'երկին նաև Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ն. Ամեն. Տնօրիք Արքեպաս. Պալուստեան և (աջ անկիւնը) Երուսաղէմի Լատինաց Պատրիարք Ն. Ամեն. Տ. Ճիւթօմօ Պէլթրիթի :

Կրկին անդամ թափօրը ընթացք կ'առնէ, և գաւիթին մէջ Հաւաքուած խոռուն բազմութեան ծափահարութեան ընդէջն Վեհափառ Հայրապետը կը բարձրանայ Պատրիարքաբարան, ուր, շքեզօրէն լուսաղարդուած փառաւոր դաշլիճին մէջ աջահամբոյր տեղի կ'ունենայ: Հակառակ իր յողնութեան, Ն. Ս. Օծութիւնը կ'ընդունի բազմահարիւր Հաւատացեալներու մաղթանքները, և բոլորին կը բաշխէ իր օրհնութիւնները :

Գիշեր է արդէն, երբ դահլիճը հետզհետէ կը պարպուի և Վեհափառ Հայրապետը կ'անցնի իր յարկաբաժինը, հանդստանալու :

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկուշաբթի, 23 Յունիս 1975, ցերեկը Ն. Ս. Օծութիւնը հանդստացաւ, իսկ կէսօրէ ետք, ժամը երեքէն վեց, ընդունեց բարի գալուստի այցելութիւններ :

Երուսաղէմ գտնուուր ընդհանուր հիւպատուները այցելեցին նոյն օրը, առաջնորդութեամբ Ֆրանսայի ընդհանուր հիւպատոս Ն. Սկեմ. Փոլ Անթուան Հանրիի : Այցելեց նաև Յունաց Պատրիարք Ն. Ամեն. Տ. Պենետիքոսոս իր միաբանութեան անդամներով : Այցելեցին Ֆրանչիսկեան միաբանութեան անդամները, զիլաւորութեամբ իրենց կիւութու Հայր Մաուրիլիուս Սաքիի, Ռուս Օրթոստրաները՝ զիլաւորութեամբ իրենց մեծաւոր Արքիմանտրիթ Տ. Սերաֆիմի, Երուսաղէմի Անկլիքան Արքեպիսկոպոսը՝ Գերշ. Տ. Ռապլըթ Սթովի-Փըրոս, Հայ Կաթողիկէ Համայնքի մեծաւոր Գերյ. Տ. Յովհաննէս Վրդ. Կամսարական, և այլ պաշտօնական հիւրեր ու այցելուներ : Այցելեցին նաև արտասահմանէն եկած հիւրերը, մասնաւորաբար Ամերիկահայ և Ֆրանսահայ մեր աղնիւ Հայրենակիցները :

Նոյն երեկոյ, Հոգեգալստեան տօնին առիթով Ռուս Օրթոստրաներու վանքին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղաւ Ն. Ս. Օծութիւն Հայրապետը, իրեն ընկերակից ունենալով Գերշ. Տ. Սերովիէ Արքեպոս . Մանուկեանը, Գերշ. Տ. Կոմիտաս Արքեպոս . Տէր Ստեփանեանը, Գերշ. Տ. Վաչէ Եպո. Յովհէփեանը, գաւագանակիր Հոգչ. Տ. Անանիա Արդ. Արարածիանը, ինչպէս նաև Հոգչ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գարիկեանը և Աւագ Թարգման Հոգչ. Տ. Գէռորդ Վրդ. Նազարեանը :

### ԺԱՄԱՆՈՒՄ Ս. ԱԹՈՌԻՍ ԲԱՐԵԲԱՐ

ՎՍԵՄ · Տէր ԵՒ ՏԵԿԻՆ ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿԵԱՆՆԵՐՈՒ

Ն. Ամեն. Աթոռիս Պատրիարք Ս. Հայրը, ընկերակցութեամբ Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Արքեպոս . Անէմեանի, Երկուշաբթի, 23 Յունիս 1975, Երեկոյեան մեկնեցաւ Պեն Կուրիօն օդակայան՝ դիմաւորելու Հ. Բ. Բ. Միութեան ցկեանս նախագահ և Ս. Աթոռիս բարերար Վահեմ. Տիար Ալեքս Մանուկեանն ու իր Ազնուափայլ Տիկինը :

Վահեմ. Տէր և Տիկին Ալեքս Մանուկեանները մայրավանք ժամանեցին զիշերուան ժամը 8·30-ին : Մայրավանքի մուտքին և զէպի Պատրիարքաբարան առաջնորդող սանդուխներուն վրայ Վահեմափայլ Ամուլը ընդունուեցաւ Ժառանգաւոր սաներու, Տատուրեան սաներու և Ս. Թարգմանչաց Վարժարանի ուսանողութեան ծափողջոյններով : Պատրիարքաբարանի դաշիճին մէջ զանոնք ընդունեց Ն. Ս. Օ. Վէհափայլ Հայրապետը, իներկայութեան Ամեն. Պատրիարք Ս. Հօր, հիւր բարձրաստիճան եկեղեցականներու և միաբանութեան անդամներու :

Կարճ հանդիսակ մը ետք Բարերար Ամուլը մեկնեցաւ Խնթըրքոնթինէն-թալ պանդոկի :

### ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԲԵԹՂԵԶԵՄ

Երեքշաբթի, 24 Յունիս 1975, առաւօտեան կանուխ ժամերէն արդէն զդալի է եռուզեռը Ս. Յակոբեանց վանքէն ներս և մուտքի հրապարակին վը-րայ : Դպրոցական աշակերտութիւնը կը փութայ վարժարան, ուրկէ քիչ ետք,



Ա. ԱԹՈՈՒԽԱ ԲԱՐԵՐԱՐ և ԿԱՅԱ. ՏԵՐ ԵՒ ՏԿՆ.

ԱԼԵՔՍ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆՆԵՐ

ժողովուրդի ալ ընկերակցութեամբ , կ'ուղղուի դէպի Յոսպէի Դուռը , ինքնաշարժներով մեկնելու համար Ա . Ծննդեան քաղաքը :

Ժամը 9.30-ին կը հնչէ մայրավանքին մեծ զանգը , ու կէս ժամ ետք վեհափառ Հայրապետը , հետը ունենալով Ա . Երուսաղէմի և Կ . Պոլսոյ Ամեն . Պատրիարքները , սրբազն հիւրերն ու միարանութեան անդամները , պատկառելի թափօրով կ'ուղեւորուի Բեթղեհէմ :



Ն . Ա . Օծութիւն Վեհափառ Կարողիկոսը , ի զլուխ հանդիսաւոր քափօրին , մուտք կը գործէ Յերդեհեկմի Ա . Ծննդեան Տաճար :


Ճամբու կէսին , Յունաց Ա . Եղիա վանքին մօտ , Ն . Ա . Օծութիւնն ու իր շքանումբը կը դիմաւորուին Բեթղեհէմի քաղաքապետին և Պէյթ-Ճալա ու Պէյթ-Մահուր գիւղաքաղաքներու քաղաքապետական կազմի անդամներուն կողմէ : Կարձ դադարէ մը և բարի զալուստի արտայայտութիւններէ ետք , ըստուացած այս թափօրը կը հասնի Ա . Ծննդեան հրապարակը , ուր ժամերէ ի վեր արդէն կը տողանցէին տեղւոյն կաթոլիկ և օրթոսոքս արիները իրենց փողերախումբերով , տաճարի հայկական զանգերու պարբերական զուարթ զանգիւններուն ընդմէջէն : Հակառակ ամրան եղանակին , հաճելի զովութիւն մը կը տիրէ :

Տաճարի Տեսուչ Հոգէ . Տ . Մեսրոպ Վարդ . Տեփոյեան ինկաման ի ձեռին կը պատրաստուի դիմաւորելու , մինչ դպիիներ ու դպրոցականներ , ինչպէս նաև պետական և տեղական բարձրաստիճան ու ականաւոր անձնաւորութիւններ կը սպասեն :



Ն. Ս. Օծուրիւն Վեհափառ Հայրապետը կը խնկարկէ  
Բերդեհեմի Ծննդեան Ս. Այրին մէջ:

Հասնելով ժամը 11.30-ին Ա. Ծննդեան հրապարակը, Ն. Ա. Օծութիւնը կը զիմաւորուի անոնցմէ, և զգեստաւորուելով կը զիմաւորէ թափօքը, որ «Խորհուրդ մեծ» Ա. Ծննդեան շարականը երգելով կը յառաջանայ գէպի տաճարը: Իջնելով Ա. Այրը, Ն. Ա. Օծութիւնը և իրեն ընկերակցող բարձրաստիճան եկեղեցականները կը կատարեն իրենց ուխտը և Ծննդեան Աւետարանի ընթեր-



Նորակառոյց Ալեքս և Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարանի  
և Ընծայարանի շենքին նակատը:

ցումէ և «Փառք ի բարձուն»ի երգեցողութենէ ետք, կը բարձրանան տաճարի հայկական բաժինը, ուր Վեհափառ Հայրապետը կ'արտասանէ եկեղեցւոյ մուտքի սաղմոսը՝ «Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս ի տուն Տեառն երթիցուք մեք»: Կարճ աղօթքէ մը ետք Վեհափառ Հայրապետը կ'օրհնէ տաճարը խոնրւած բազմութիւնը ու նոյն չփերթով կը բարձրանայ Բեթղեհէմի Հայոց վանքը, ուր կ'ըլլան բարի գալուստի սրտարուի ճառեր և արտայայտութիւններ:

Ժամը 1-ին ի պատիւ Ն. Ա. Օծութեան, Բեթղեհէմի քաղաքապետարանին և Ա. Աթոռիս կողմէ չքեղ ձաշկերոյթ մը տրուեցաւ Բեթղեհէմի մեծագոյն սրահին մէջ, որուն ներկայ եղան Հայ բարձրաստիճան հիւրերն ու տեղական կարեւոր անձնաւորութիւններ: Բարի գալուստի անկեղծ խօսքերով հանդէս եկաւ Բեթղեհէմի քաղաքապետ Վահեմ. Տիար էլիսա Ֆրէյժ, որ Վեհափառ Հայրապետին բարձրաքանդակը իր կափարիչին վրայ կրող սատափեայ սքանչէլի տուփի մը նուիրեց Ն. Ա. Օծութեան: Տուփը կը պարունակէր նաև սատափապատ կազմով հին տպագիր Հայերէն թանկագին Աստուածաշունչ մը:

Կէսօրէ ետք ժամը 3·30-ին Բեթղեհէմէն դալով, Ն. Վեհափառութիւնը իր շքախումբով այցելեց Խորայէլեան Խորհրդարան, և ընդունուեցաւ Խորհրդարանի Նախագահ Վահեմ. Եիշայահուի կողմէ, իր առանձնարանին մէջ: Հոն կը գտնուէր նաև Կրօնից Նախարար Վահեմ. Իցհաք Ռաֆայէլ: Մտերմիկ զրոյցի ընթացքին, Խորհրդարանի Վահեմ. Նախագահը Ն. Ս. Օծութեան նըլիքեց հրէական երկու թանկապին դրամներ, նախքան Քրիստոս Առաջին Ֆարուն պատկանող:



Մեծանուն Բարերար Վահեմ. Տիար Ալեքս Մանուկեան կը կտրէ նորակառոյց Վարժարանի մայր դրան ժապաւէնը:

### ՖԻՀԱՐՄՈՆԻՔ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

Երուսաղէմի Քաղաքապետարանին, Երուսաղէմի Ֆիլհարմոնիք Նը-  
ւազախումբին և Երուսաղէմի Թատրոնին կազմակերպութեամբ, ի պատիւ ադ-  
գիս Վեհափառ Հայրապետին և իրեն ընկերակցող բարձրաստիճան եկեղեցա-  
կան հիւրերուն, նուազահանդէս մը տրուեցաւ Երուսաղէմի շքեղ թատրոնին  
մէջ Երեքարթի, 24 Յունիս 1975, գիշերուան ժամը 8.30-ին :

Հայ և օտար ընտիր հասարակութիւն մը ամբողջութեամբ լեցուցած  
էր սրահը ժամանակէն շատ առաջ. ներկաներուն մէջ էին կրօնից Նախարար  
Ն. Վահեմ. Իցհաք Ռաֆայէլ, Զրոսաշընիկութեան Նախարար Ն. Վահեմ. Մօչէ  
Քոլ, Երուսաղէմի Նահանգային Կառավարիչ Ն. Վահեմ. Ռաֆայէլ Լելի, Երու-  
սաղէմի Քաղաքապետ Ն. Վահեմ. Թէտի Քոլէք, ինչպէս նաև հիւրատոսական  
մարմինի և պետական ներկայացուցիչներ : Ն. Ս. Օծութեան գալուստը ողջուն-  
ուեցաւ յոտնկայս և ծափահարութեամբ :

Ի պատիւ Ն. Ս. Օծութեան յայտագիրը կը պարունակէր նաև հայկա-  
կան բաժին մը, բաղկացած հայկական երգերէ և պարերէ, որոնք իրացործը-  
ւեցան Հ. Ե. Միութեան երգչախումբին և պարախումբին կողմէ : Երգչախում-  
բը կը զեկավարէր Ս. Աթոռիս Դպրապետ Պրն. Սահակ Գալայճեան : Իր դաշն  
ձայնով «Աւրափի լեր»ը մեներգեց Հոդշ. Տ. Աղան Վորդ. Պալիօգեան : Այս խոր  
ապրումով Տիկին Նազիկ Պասմանեան մեներգեց «Ղարաբաղի եղնիկ»ը :

Նուազահանդէսի բաժինը կը պարունակէր Ամերիկահայ Երգահան  
Ռիչըրտ Եարտըմեանի զեղեցիկ «Հայկական սուլիթ»ը, ինչպէս նաև կորոներ  
Պիդէն, Ռախմանինովիչն, Զայքովսկին և Վերտիկին :

Ընդուժութիւնի ժամանակ ընդունելութիւն մը տեղի ունեցաւ, երր Ն. Ս.  
Օծութիւն Վեհափառ Հայրապետին նուիրուեցաւ յատկապէս պատրաստուած  
շքանշան մը Երուսաղէմի Քաղաքապետութեան կողմէ, հայերէն մասնաւոր  
արձանագրութեամբ :

Գեղեցիկ այս երեկոյթը աւարտեցաւ գիշերուան ժամը 11-ին :

### ԶԱՆԱԶԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Զորեքարթի առաւօտ, 25 Յունիս 1975, Նորին Ս. Օծութիւնը այ-  
ցելեց Երուսաղէմի թանգարանը, Համալսարանը և Երկրորդ Համաշխարհային  
Պատերազմի ընթացքին նահատակուած Հրեաներու յուշարձանը :

### ԲԱՑՈՒՄ ԱԼԵՔՍ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԺԱՌԱՆԳԱԱՌԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՇԵՆՔԻՆ

Զորեքարթի, 25 Յունիս 1975, կէսօրէ ետք ժամը 5-ին, բացումն է  
Ալեքս և Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարանի նորակառոյց շէնքին :

Ալեքն շարաթներէ ի վեր մէծ եռուզեռ մը կը տիրէ Մայրավանքի  
մուտքին դիմաց՝ նորակառոյց շէնքին ներսն ու դուրսը, երր վերջնական պատ-  
րաստութիւնները կը տեսնուին կրթական այս նոր վասարանին պաշտօնական  
բացումին Համար : Վանքին և վարժարանի միջև տարածուող հրապարակը ըս-  
քանչելի կերպով դրոշազարդուած է, և ծաղկազարդ յաղթական կամար մը,  
իր մեծատառ պատառով, բարի գալուստ կը մաղթէ Ն. Ս. Օծութիւն Վեհա-  
փառ Հայրապետին : Ամէն գիշեր, մասնաւոր կերպով զետեղուած զօրաւոր լու-  
սարձակներ լոյսի ծովի մէջ կը նետեն ժառանգաւորաց Վարժարանի նոր  
շէնքը :

Զորեքշաբթի կէսօրէ ետք, տակաւին ժամը չորս՝ չեղած, արդէն կը սկսին հասնիլ պաշտօնական հիւրերն ու բազմահարիւր Հայեր։ Երուսաղէմի ամբողջ Հայ զաղութը հոն է, լեցնելով հրապարակն ու Ազերս և Մարի Մանուկեան Ժառանգաւորաց Վարժարանի գեղեցիկ բակը։ Հետզհետէ կը հասնին Երուսաղէմի կրօնական բոլոր համայնքներու ներկայացուցիչները և Ս. Աթոռիս չփեղօրէն հագուած բարապաններէն կ'առաջնորդուին Պատրիարքարան, ուր կը սկսի կազմուիլ պատկառելի թափօրը։

Մայրավանքի մեծ զանգը, բոլորին սիրելի և ծանօթ իր զօղանջը անգամ մը ևս լսելի կը դարձնէ, աւետելով ուրախութեան և հպարտանքի օր մը ևս զարաւոր այս Հաստատութեան և Հայութեան համար։ Պատմական և նուիրական Սիոնի բարձունքին, ուր Հայ ներկայութիւնը կ'երթայ ևս մինչև Հինգերորդ Դար, այսօր նոր և փառաւոր կոթող մը կու գայ կրկին անզամ փաս-



Նորակառոյց Ժառանգաւորաց Վարժարանի բացման համիխուրեան իր սրտի խօսքը կ'ըսէ Ն. Վասիլ. Բարերարը։ Բեմին վրայ կ'երկին (ձախէն աջ) Ս. Արքոնիս Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, Պապական Նուիրակ Մօնի. Ուիլիմմ Քէրին, Կրօնից Նախարար Ն. Վասիլ. Ի. Ռաֆայէլը, Լատինաց Պատրիարք Ն. Ամեն. Ճ. Պէլքրիբին, Ն. Ս. Օծուրիւն Վեհափառ Հայրապետը, Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ն. Ամեն. Տ. Շնորհ Արքեպոս. Գալուստեանը, Վասիլ. Տիգ. Մարի Մանուկեանը և Երուսաղէմի Քաղաքապետ Ն. Վասիլ. Թէսի Քոլէքը։

Մելու Հայ Եկեղեցին և ժողովուրդին կենսունակութեան մասին։ Ողի և Հարստութիւն հիանալիօրէն ի մի ձուլուած՝ կերտած են լոյսի այս չէնքը, որմէ ներս պիտի սաւառնին մեր նախահայրերը զինած և ապրեցուցած կամքն ու Հաւատքը։

Ի վերջոյ ընթացք կ'առնէ թափօրը։ Ն. Ս. Օծութիւն ազգիս Վեհափառ Հայրապետին երկու կողմերէն կ'ընթանան Երուսաղէմի և Կ. Պոլսոյ Ամեն։ Պատրիարքները չփեղօրէն զգեստաւորուած։ անոնց կը հետևին Հայա-

տանեայց Եկեղեցւոյ բարձրաստիճան իշխանաւորները՝ չորս Արքեպիսկոպոս, հինգ Եպիսկոպոս, Ս. Յակոբեանց ժրաշան վարդապետները, արտասահմանէն եկած հիւր քահանաներ, Ժառանգաւոր սաներ, երգչախումբի անդամներ և պետական, հիւսպատոսական ու կրօնական ներկայացուցիչներ :

Շարականի երդեցողութեամբ ընթացող թափօրը դժուարութեամբ կը յառաջանայ Վանքի մուտքին մինչև նոր շինքը լիցուած խուռն բազմութեան ալիքներուն մէջէն : Ժառանգաւորաց Վարժարանի մայր մուտքին առջև յուղումով կը սպասէ Բարերար Ամոոլը՝ Վասեմ . Տէր և Տիկն. Ալեքս և Մարի Մանուկեան, կողքին ունենալով իր երիտասարդ թոռնիկն ու թոռնուհին :

Վերջապէս, թափօրը կանդ կ'առնէ Վարժարանի փայտեայ հսկայ դրան առջև, որուն վերև, գեղեցիկ կամարին վրայ քանդակուած կը կարդացուի .

ՔԵԶԵԼ Է ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾ Ի ՍԻՈՆ

ԵՒ ՔԵԶ ՏԱՑԻՆ ԱՂՕՖ ՅԵՐՈՒՍԱՂԵՄ

Կը հետեի կրօնական արարողութիւն մը, շարականներու երդեցողութեամբ և Աւետարանի ընթերցումով :

Աստ, Ս. Աթոռիս անզուղական Բարերար Վասեմ . Ալեքս Մանուկեան կը կտրէ կապոյտ ժապաէնը ու դրան հսկայ դոյդ փեղկերը կը բացուին, ընդունելու համար Ն. Ս. Օծութեան օրհնարեր ներկայութիւնը :

Հիացական ակնարկներով, բոլորը կը մտնեն Ալեքս և Մարի Մանուկեան Ժառանգաւորաց Վարժարանէն ներս, անոր ճարտարապետութեան և կառոյցին գեղեցկութենին հմայուած :

Դիմացը, պրոնդէ շրջանակաձև դիմաքանդակն է Ամեն . Պատրիարք Ս. Հօր, և քիչ մը աւելի յած՝ մարմարեայ յուշատախտակը կը յաւերժացնէ այսօրուան արարողութիւնը .

Ի ՓԱՍ ԱՍՏՈՒՇՈՅ, Ի ԼՈՒՍԱԽՈՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵՒ Ի ԿԱՅԵԼՈՒՄ ԱԶԳԻՆ

ԲԱՑԱՆ ԴՐՈՒՅ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՍԻՍ ՇՆՈՐՀԱԲԱՇԻ ԶԵՈԱՍԲ

ՎԵԼԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՄԵՐՈՅ

S. S. ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱՅՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ի ՊԱՏՐԻԱՐքՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՈՅՆ

S. ԵՂԻՉԵՐ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Ի ԹՈՒՐԻ ՏԵԱՌ 1975, Ի ՅՈՒՆԻՍԻ 25

և հանդիպակաց պատին վրայ, ուրիշ մարմարեայ տախտակ մը կը յուշէ .

ԿԱՌՈՒՑԱԻ ԺԱՌԱՎԱԿԱՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՍ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆՍ

ԱՐԴԵԱՄԲ ԵՒ ԾԱԽԻՔ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱԶԳԻՆ

ՏԵԱՌ ԱԼԵՔՍԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԵՐԱՆԻ ՈՐ ՈՒՆԻՑԻ ՅԻՇԱՏԱԿ Ի ՍԻՌՈՆ

Ն. Ա. ՕՃՈՒԹԵԱՆ ՊԼԽԱԿԱՌՈՒԹԵԱՄԲ, ՀԱՆԴԻՓԱԿԱՆՆԵՐԸ ապա կը գիշեն դէպի բակը, ուր տեղ կը զրաւեն յատկապէս պատրաստուած աթոռներու վրայ : Ն. Վեհափառութիւնը կը բազմի բեմը զետեղուած զահին վրայ, իր կողքին ունենալով Ս. Աթոռիս և Կ. Պոլսոյ Ամեն . Պատրիարքները, Երուսաղէմի Լատինաց Պատրիարք Ամեն . Տ. Ճիւքօմ Պէլթրիթին, Պապական Նուիրակ Մօնս . Ուկիլիք Քէրիւն, Ժառանգաւորաց Վարժարանի նոր չէնքի և Ս. Աթոռիս Բարերար Վսեմ . Տէր և Տէն . Ալեքս և Մարի Մանուկեանները, Կրօնից Նախարար Ն. Վսեմ . Իցհաք Ռաֆայէլը և Երուսաղէմի Քաղաքապէտ Ն. Վսեմ . Թէտի Քոլէքքը :

Հանդիսութիւնը վարեց Ժառանգաւորաց Վարժարանի և Բնձայարանի Վերատեսուչ Գերշ . Տ. Շահէ Արքեպոս . Աճէմեան, որ բացման հակիրճ խօսքէ մը ետք Հրաւիրեց Ն. Վսեմութիւն Կրօնից Նախարարը արտայայտուելու : Ն. Վսեմութիւնը երբայիրէնով և ապա անդէրէնով խօսեցաւ շատ զեղեցիկ ճառ մը, որով չնորհաւորեց Դպրեվանքի նոր չէնքին բացումը . Դպրեվանք, որ, ըստ Վսեմ . Նախարարը, «Կասկած չունիմ թէ Զեր ծանօթ նուիրուածութեամբ և կորովով ուսման և կրթութեան բարձր մակարդակի մը վրայ պիտի պահէք, պատրաստելու համար Զեր Եկեղեցին ծառայութեան կոչուած կարող և գիտնական հոգեորականներ» : Անդլերէն խօսելով Վսեմ . Բարերարին և ներկայ արտասահմանեան հիւքերուն համար, ան յիշեց Հին առած մը որ կ'ըսէ . «Քիչ զովեստ տալ անձի մը ներկայութեան, և շատ զովեստ՝ անձին բացակայութեան» : Սակայն, յարեց Վսեմ . Նախարարը, Հակառակ այդ առածին, ինք այսօր չէր կրնար չպովել Վսեմ . Ալեքս Մանուկեանը, որուն տակաւին երէկ միայն ծանօթացած էր և բայց որմէ հիւնալի ու խոր տպաւորութիւն մը կը բած էր իրբեկ համեստ, աղնիւ և առաքինի անձնաւորութիւն մը : Դրամը, որ յաճախ կը խաթարէ մարդկային հոգին ու նկարագիրը, ընդհակառակը՝ Պարոն Մանուկեանը առաջնորդած էր մէկը միւսէն զեղեցիկ բարերարութիւններու : Ն. Վսեմութիւնը եղբակացուց իր ճառը, յայտարարելով որ ի նշան գնահատանքի, Կրօնից Նախարարութեան կողմէ Դպրեվանքին կը նուիրէր 30,000 հոր . Ուկի, զասագիրքերու գնումին համար, և ապա, բուռն ծափահարութիւններու ընդմէջէն, Բարերար Վսեմ . Տիար Ալեքս Մանուկեանին յանձնեց յատկապէս պատրաստուած մէտալ մը :

Ապա բեմ հրաւիքունցաւ անդուզական Բարերարը, իր սրտի խօսքը ըսելու : Վաեմափայլ Բարերարը յուզումով կարգաց Երուսաղէմի Ս. Աթոռին պատմական ու աղբային գերն ու նշանակութիւնը վերլուծող Հետևեալ ճառը .

Վեհափառ Տէր,

Ամենապատիւ Պատրիարք Սրբազն Հայրեր,

Գերաշնորհ, Հոգեշնորհ և Արժանապատիւ Հայրեր,

և յարգելի հիւրեր,

«Երրօն մի պահ քոնց է հիմա, դու էլ նայիր սեգ գագաթին ու անցիր» ըսած է մեր իմաստուն բանաստեղծը՝ Աւետիք Խաչակեան, ակնարկեալ Սրարատին. մենք ևս կրնանք մինոնյն մտածումներով մօտենալ Երուսաղէմին, որովհետև, եթէ Արարատը հանդիսացաւ ազգային և աշխարհագրական բարձունք մը՝ Երուսաղէմը միշտ մնաց հոգևոր բարձունք մը մեզի համար:

Կերպով մը՝ Հայութիւնը քրիստոնէացաւ Երուսաղէմի մէջ, և Քրիստոնէութիւնը հայացաւ Սուլր Էջմիածնի մէջ. և այդ երկու կեղրոնները դարերով հանդիսացան մեր հաւատքի զոյց բևեռներ:

Հայոց ներկայութիւնը այս Սուլր Քաղաքին մէջ արձանագրուած է Քրիստոնէութեան առաջին դարերուն իսկ: Կ'ըսուի թէ արդէն վեցերորդ դարուն շուրջ Եօթանասուն վանքեր գոյութիւն ունեին, հիմնուած ու պահպանուած Հայուստանի իշխաններուն կողմէ— ինչպէս՝ Արծրունեաց Կանք, Մամիկոննեց Կանք, Արշակունեաց Կանք ևալլ:

Ամեն սերունդ ամեն սերունդ վանք մը, գանձ մը, խաչքար մը կամ Շոյնիսկ կանթեղ մը աւելցնելու ծգտած է քրիստոնակոն այս հողերուն ու բլուրներուն վըրայ:

Ամեն սերունդ՝ աւանդ մը ծգելով Երուսաղէմի մէջ՝ հաւատացած է որ յափտենութեան կը կտակէ իր գանձերը: Եւ բոլոր դարերուն ալ հաւատքի պայծառ լոյս մը արձակուած է այս սրբազն քաղաքի գմբէթներէն ու քարերէն. և մեր նախահայրերը, դէպի լոյսը սուրացող թիթեններու նման, միշտ ծգտած են այդ լոյսին, երբեմն լուսաւորուելով ու երբեմն ալ այրելով՝ անէ:

Երուսաղէմ տեսած է Հայոց Հեթում երկրորդ յաղթական արքայի փառքը, ինչպէս ընդունած է խոնարհ աղօթքը Կիլիկիոյ Լևոն հինգերորդ պարտեալ թագաւորին:

Ամեն Հայ, նուաճող արքայէն մինչև ամենէն համեստ ուխտաւորը, բանց մը բերած է Երուսաղէմ. ոմանց բերած են իրենց գանձը, ուրիշներ՝ իրենց սուլր մատեանները, և դեռ ուրիշներ իրենց աղօթքը և յուսահատներ՝ իրենց արցոնները ու յոյսը: Եւ այս կերպով մեր կեանքին թելը հիւսուած է Երուսաղէմի պատմութեան և նոյնացած է անոր հետ:

Սակայն, երբ մեր ակնարկը դարձնենք դէպի Երուսաղէմի բլուրները՝ այնտեղ կանգնած հաւատքի տունները պիտի վկայեն թէ այս սուլր Քաղաքը Շոյիրական է նաև բազմաթիւ այլ ժողովուրդներու: Բոլոր քրիստոնեանները, բոլոր հրեաններն ու բոլոր իսլամները իրենց նայուածքը ուղղած են Երուսաղէմին. ու դարերով այնքան բուտն սիրոյ առարկայ դարձած այս քաղաքը հանդիսացած է նաև վայրը ահեղ մարտերու: Հզօր բանակներ մերթ փշրուած են անոր բերդերուն առջև ու մերթ նուաճած են զայն՝ հարիւր հազարներ նահատակելով, Քրիստոսի արեամբ յագեցած այդ հողերուն վրայ:

Իսկ Հայ Երուսաղեմը, զուրկ ըլլալով բանակներու պաշտպանութենէն, երբեմն ճգմուած է օտարներու կրուցկներուց տակ ու երբեմն յարութիւն առած՝ Ա. Յարութեան Տաճարի աւերակներէն:

Երևակայեցէք պահ մը Երուսաղեմի Սուրբ Յակոբեանց արի միաբանութեան դարերու կեանքը. երբ տարբեր կրօնըներ ու դասանանքներ, հսկայ պետութեանց զօրութեան ապահնած, մերթ կը տիրապետէին Երուսաղեմի ու մերթ կը խորտակութիւն անոր դուտերուն առջև, մեր ափ մը միաբանները Հայոց իրաւունքները կը պաշտպանէին այս Սուրբ Քաղաքին մէջ: Եւ ասիկա՝ ոչ միայն մէկ տարի, մէկ տասնամեակ կամ մէկ դար, այլ աւելի քան տասներին դար շարունակաբար:

Թագաւորներ ու իշխաններ եկած ու անցած են Երուսաղեմէն, երբեմն աւերակ և երբեմն ալ նոր գմբէթներ ծգելով իրենց ետին. և այդ բոլոր Վերիվայրումներուն մէջ Սրբոց Յակոբեանց ուխտեալ Միաբանութիւնը ամուր կառչած է այս աղօթատեղիներուն և պահպանած է Հայոց Եերկայութիւնը այս սրբազն վայրերուն մէջ:

Երբեմն, վտարուած են անոնց իրենց վանքերէն, խոշտանգուած, ըսպաննուած ու ծանր տուգանքներու ենթարկուած, սակայն, ի վերջո Վերադարձած են այստեղ, շարունակելու այն աղօթքը, զոր իրենց նախահայրերը սկսած էին դարեր առաջ:

Ի՞նչ է որ այս միաբանութիւնը այնքան ամուր կերպով կապուած պահեց այս Սուրբ Քաղաքին, եթէ ոչ՝ իր հզօր հաւատքն ու Հայկական իմաստութիւնը, Վերապրելու իմաստութիւնը:


Արդարն, ինչ որ Յոյներ ու Լատիններ կարողացած են ընել հսկայ բանակներով և միլիոնաւոր հետևորդներով՝ Հայերը կարողացած են ընել պարզապես հաւատքով և իմաստութեամբ: Ու մարդ Երուսաղեմ պէտք է գայ՝ ճանչնալու համար Հայուն հաւատքին զօրութիւնը:

Ամէն մէկ վաճքի, ամէն մէկ խորանի և ամէն մէկ կանթեղի դիմաց դարերով աղօթելով է որ պաշտպանուած են Հայոց իրաւունքները այստեղ: Եւ հըռաշքը այն է որ տակափն կը շարունակուի այդ իմաստուն աղօթքը ու պիտի շարունակուի նաև ապագային՝ յաւերժորէն դրոշմուած պահելու համար Հայոց անոնց այս վանքերուն ու սրբազն քարերուն վրայ:

Երուսաղեմի Միաբանութիւնը, սակայն, երեք մինակ չէ մնացած իր պայքարին մէջ. Հայ ժողովուրդը՝ ո՛ւր որ ալ գտնուած է՝ իր նեցուկն ու պաշտպանութիւնը հասցուցած է անոր: Սուրբ Էջմիածնի գահակալներէն մինչև Պոլսոյ ամիրաներն ու պարզ հաւատացեալները կողքին կանգնած են մեր Պատրիարքութեան:

Ճակատագրին մէկ խաղով՝ Հայ Երուսաղեմի փառքը դարձած է նաև անոր տառապանքի շղթան. և դարերու վրայ երկարող այս զուգորդութիւնը ամէնէն խորհրդանշական կերպով պարզուած է Գրիգոր Ծղթայակիր Պատրիարքի կեանքին ընդմէջէն: Արդարն, սրբակրօն այդ եկեղեցականը, 18րդ դարու սկիզբին Պատրիարքական գահ բարձրանալով կ'որոշէր իր վզին շղթայ կրել, այնքան ատեն «որքան պարտուց ծանրութեան տակ կը հեծէ Տեաններօր Աթոռը»: Այդ օրերուն, Ա. Էջմիածնի Ամենայն Հայոց Աստուածատուր Հայրապետն ու Պոլսոյ Յովհաննէն Կոլոտ Պատրիարքը, ինչպէս համայն Հայ ժողովուրդը ձեռք կը մեկնեն Երուսաղեմին, որպէսզի Պատրիարքն ու Պատրիարքութիւնը ձերբազատուին շղթաներէն:

Դարերու ընթացքին այդ շղթան կերպով մը միշտ ծանրացած է Երուսաղեմի Պատրիարքութեան վիզին. և անոր միաբանները համբերութեամբ, տա-



Ալեքս և Մարի Մանուկեան ժառանգաւորաց նոր շենքի բացման համար դիսութեան իր հայրապետական պատգամը կու տայ Ն. Ս. Օծութիւն ազգիս Վեհափառ Կարողիկոսը : Անզլերէնի կը բարգմանէ Ս. Արոնիս Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Ս. Արքեպաս . Անէմեան :

ուապանքով ու փառքով կրած են այդ շղթաները, միշտ հաւատալով որ իրենց կողքին պիտի գտնեն նուիրապետական մեր միւս Աթոռներն ու հաւատացեալ ժողովուրդը:

Զարմանալի չէ, ուրեմն, որ այսօր, Երուսաղեմի Պատրիարքութեան կեանքին այս պատմական հանգրուանին, աշխարհի չորս ծագերէն Հայեր եկած են խնդակից դառնալու Միաբանութեան ուրախութեան: Մանաւանդ, այսուղի ուխտի եկած է Ամենայն Հայոց Առաքինազարդ Հայրապետը, Իր օրինութիւնը բերելու այս ձեռնարկին ու այստեղ կատարուող գործին: Վազգեն Կեհափառի ձեռողով՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի ոսկեդին Աջին օրինութիւնն է որ կը բաշխուի մեր վրայ: Այնպէս ինչպէս Քրիստոս Խաչին տանջանքէն բարձրացաւ Երկինքի արքայութեան՝ մարդկութեան փրկութեան համար, Եոյնպէս ալ Գրիգոր Լուսաւորիչ Խոր Վիրապի տանջանքներէն բարձրացաւ Սուլր Էջմիածնի գահը՝ Հայոց փրկութեան համար. և այսօր, դարեր վերջ, այս Սուլր Քաղաքին մէջ, ի մի կու գան Քրիստոսն ու Լուսաւորիչը, Հայութիւնն ու մարդկութիւնը, և մենք բախտաւոր վկաները կը դառնանք այս պատմական եղելութեան:

Բախտաւոր կը զգամ մանաւանդ ե՞ս որ այսօր ուխտի եկած եմ հոս, այնպէս ինչպէս դարեր առաջ ուխտի եկած էին Երուսաղեմ՝ մեր նախնիքները՝ Ացիէն, Ակօնէն, Պոլիսէն կամ Իզմիրէն: Բախտաւոր կը զգամ որ վկան կը դառնամ այդ պատմական եղելութեան և այդ առիթով ինծի ևս պատեհութիւնը կը տրուի քա՛ր մը զետեղելու, լոյսի կոթո՛ն մը բարձրացնելու այս Սուլր Երկրին մէջ:

Մեր նախահայրերը, հարկաւ, իմաստութիւն մը ունեին, երբ կը հաւատային թէ Երուսաղեմի մէջ աւելցած ամէն քար ու կանթե՞ն՝ հիմնացարն ու արիւնը պիտի դառնային իրենց կեանքին: Ու մենք, անոնց խոնարհ ժառանգորդները, միևնո՞յն հաւատքով ու նուիրումով կու գանք Երուսաղեմ, կաթիլ մը իւղ աւելցնելու անոնց վառած կանթեղին ու շարունակելու յաւետ անոնց սրբազն հաւատքն ու աւանդութիւնը:

Հրաշքներու լոյսով ողողուած այս Երկինքին տակ՝ գիտենք թէ բազմաթիւ սիրտեր բացուած են խոստովանութեան սեղաններուն առջև. հետևաբար, իբրև յետին ուխտաւոր մը այս քաղաքին մէջ՝ թող թոյլ տրուի նաև ինծի ընել խոստովանութիւն մը. արդարն, եթէ Աստուած տուած է ինծի Ծիւթական բախտաւորութիւն մը, շնորհած է Եոյն ատեն աւելի մեծ բախտաւորութիւն մը՝ տալո՞ւ Երշանկութիւնը. և ինծի համար աշխարհի վրայ չկայ աւելի մեծ հրանուանք՝ քան Ծիւթականը հոգեկանի վերածելու երջանկութիւնը: Ամէն զմբէթ որ կը կանգնի, ամէն լոյսի տաճար որ կը բարձրանայ՝ աւելի կը հարստացնէ զիս, աւելի կը լիացընէ զիս ու կեանցս իմաստով կը լեցնէ. որովհետև, Ծիւթականին հոգեկանի վերածումը՝ անկայուն աշխարհին մնայուն աշխարհի անցում մը կը Եշանակէ: Բոլորս ալ անցաւոր ենք այս աշխարհին մէջ, մեծատուն ըլլանք թէ խոնարհ բանուուր. բայց կը մնայ այն կոթողը զոր կը կանգնենք, այն գանձը զոր յաւիտենութեան կը յանձնենք և այն աւանդը զոր մեր հարազատ ժողովուրդին կը ձգենք:

Հոգեկան այսպիսի ապրումներէն ծնունդ առաւ ժառանգաւորաց Վարժարանի այս քարեղեն կոթողը, որ վստահ ենք, կանգուն պիտի մնայ տակաւին, երբ բոլորս մեկնած ըլլանք արդէն այս աշխարհին: Ու եթէ դարեր ետք Հայ վանական մը պիտի պատրաստուի այստեղ՝ մեր սուլր վայրերը պահպանելու, մեր հաւատքը յաւերժացնելու և Հայութեան անունը պահպանելու՝ ահա այդ գործն է որ պիտի մնայ մեզի և այդ իրողութիւնն է որ պիտի վարձատրէ մեր զոհողութիւնները:

Աւետարանական խօսքով՝ Աստուծոյ տուածն է որ կը վերադարձնեմ իրեն. և ինչ որ տուաւ ինծի իմ ժողովուրդս, իբրև ազգային ապրում ու հաւատք,

այն է որ կը վերադարձնեմ իրեն ամենայն սրտով, անսակարկ բաշխումով և ամբողջական նուիրումով:

Ահա թէ ինչո՞ւ ըսի թէ հերթը մերն է հիմա Երուսաղեմի մեջ քար մը աւելցնելու և... անցնելու:

Կը յուսանք ու կը հաւատանք որ ժառանգաւրաց այս շենքը նշանակալից խթան մը պիտի հանդիսանայ Պատրիարքութեան յառաջիկայ գործունեութեան մեջ. շենքի մը Ծիրական կառոյցը այնքանով իմաստ կը ստանայ որքանով որ հոգի կը մտնէ անոր մեջ: Վստահ ենք թէ Պատրիարք Սրբազն Հայրը, ինչպէս անոր շուրջ խմբուած Միաբանութիւնը, իրենց կրթական ու հոգևոր գործունեութեամբ լիովին պիտի արծնորեն ժառանգաւրաց այս շենքը:

Ամբողջ մեր պատմութեան ընթացքին հոգևոր ու մտաւոր սնունդի աղբիւ հանդիսացած է Երուսաղեմը մեզի, մանաւանդ այնպիսի ժամանակներու երբ հայրենի աշխարհը կործանումի ու քանդումի ենթարկուած էր:

Այսօր ճիշդ է թէ մեր պատմական հայրենիքի մեկ փոքրիկ լեռնաշխարհը կ'ապրի իր վերածնունդը և իր բարիքները կը հասցէ արտասահմանի հայութեան. սակայն Երուսաղեմի Պատրիարքութեան վիճակուած է բոլորովին տարրեր ու եզակի դեր մը:

Ամէնէն դժուար ժամանակներուն ալ, Երուսաղեմ կողերականներ հասցուցած է Սփիտքին, երբ ինք այնքան կարիքը ունեցած է միաբաններու. և այսօր, աշխարհի տարրեր անկիւններու վրայ Երուսաղեմի միաբաններու գործունեութիւնը կը կազմէ անոր փառապակը:

Երուսաղեմը կ'ապրի Սփիտքի Հայութեամբ, Սփիտքի Հայութիւնն ալ՝ Երուսաղեմով. այնքան ատեն որ կանգուն ու պայծառ կը մնայ Երուսաղեմի վանք՝ Վստահ ենք թէ անխափան պիտի մնայ Սփիտքի հոգևոր մատակարարութիւնը:

Մեր Պատրիարքութիւնը այստեղ կը գտնուի իրայատուկ դիրքի մը մեջ. աշխարհի այս չարչարեալ հանգույցին վրայ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեան, հետևելով իր նախորդներու իմաստութեան, կարողացած է անվտանգ պահել մեր իրաւունքները և իրագործել շինարարական ծրագիրներ:

Միւս կողմէ Պատրիարք Հայրը ամենայն հաւատարմութեամբ պաշտպան կանգնած է Սուլը Էջմիածնայ հեղինակութեան ու վարկին, անխախտ պահելով երայուական կապը մեր նուիրապետական սուլը Աթոռներուն միջև:

Վերջապէս Երուսաղեմը, Հայրենիքն ետք, ամէնէն հարուստ գանձատունն է մեր մշակութային ժառանգութեանց. ժառանգութիւններ, որոնք թէ՝ ազգային հպարտութեան և թէ մտաւորական կեանքի բարգաւաճման աղբիւներ են մեզի համար:

Հակառակ աղետալի պատերազմներուն և աւերներուն՝ այսօր Երուսաղեմը հպարտ է իր շինարարական իրագործուներով և իր հոգևոր առաջնորդութեան գիտակցութեամբ: Երջանիկ ենք որ մեր այցելութիւնը ևս կը գուգադիպի շինարարական այս ծրագիրներուն մեկ կարևոր հանգրուանին:

Այս հանգրուանը իր պատմական նշանակութիւնը կը ստանայ մանաւանդ. Ամենայն Հայոց Հայրապետին օրհնաբեր Եերկայութեամբ: Հայոց Հայրապետը, իր երանաշնորհ նախորդներուն նման գիտակից է Երուսաղեմի ազգային ու միջազգային նշանակութեան և այդ իսկ պատճառաւ. եկած է իր Եերկայութեամբ փառաւորելու այս առիթը:

Սուլը Էջմիածնը մեր նախահայրերուն ծեռակերտն է, իսկ Հայոց Հայրապետը՝ այդ սրբազն ծեռակերտն ըխող կենդանի շունչ և օրհնութիւն: Հոնուր կ'երթայ ան՝ մեր պատմութեան արձագանքները կը հետևին իր քայլերուն. իր

անձին, խօսքին ու շունչին մէջէն մենք կը լսենք մեր նախահայրերուց ծայցն ու անոնց կամքին արտայայտութիւնը:

Այսօր Վեհափառի անձով այստեղ ներկայ է ամբողջ Հայութիքը և ամբողջ Հայաստանեայց Եկեղեցին: Այս պատեհութեամբ մեր հոգիները կը լեցուին ջերմ հրանուանքով, որովհետև մենք հաւատացած ենք թէ Էջմիածինը յաւիտենական առաքելութիւն մըն է մեր ժողովուրդին համար. և անոր հպումն ու օրհնութիւնը՝ ամէն ձեռնարկ կը կոչեն յաւիտենութեան:

Ահա այսպիսի ջերմ հաւատքով է որ Կ'ողջունենք Ամենայն Հայոց Հայրապետին ներկայութիւնը մեր մէջ:

Այս հանդիսութիւնը գեղեցիկ պատեհութիւն մը եղաւ նաև իրարու մօտ բերելու Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրապետական երեք Աթոռներու գահակալերը: Դարերու ընթացքին մեր նուիրապետական Աթոռները միշտ լծակից ու գործակից հանդիսացած են իրարու, այնքան ատեն որ թոյլատու եղած են քաղաքական արտաքին պայմանները:

Այսօր Երուսաղէմի Սրբազն Պատրիարքին կողքին՝ մասնաւոր հաճոյք է ողջունել նաև Պոլսոյ Պատրիարքը՝ յանձին Ամենապատի Տէր Շնորհք Սրբազնի: Պոլսոյ Աթոռը ևս պատմական դեր մը կատարած է մեր ժողովուրդի ճակատագրին մէջ, և Շնորհք Պատրիարք, դժուար պայմաններու տակ, կ'աշխատի Պատրիարքութիւնը պահել իր պատմական առաքելութեան մէջ: Շնորհիւ անոր անձնուէր ճիգերուն Սուրբ Խաչ Դպրութիւնը ևս կը բերէ իր մասնակցութիւնը Հայոց հոգևոր կերտումի ընդհանուր ճիգին:

Մեր պատմութեան մէջ Պոլսոյ Պատրիարքները միշտ փութացած են հասնիլ Երուսաղէմի օժանդակութեան, ամէն անգամ որ տագնապի մը մէջ եղած է ան սակայն այսօր ուրախալի է որ Պոլսոյ Ամենապատի Պատրիարքը կու գայ այստեղ վկան հանդիսանալու շինարար ձեռնարկի մը:

Շնորհակալ ենք Վեհափառ Հայրապետին, մեր զոյգ Պատրիարքներուն, Շահէ Արքեպիսկոպոսին, Առաջնորդ Սրբազն Հայութուն, հոգևորական և աշխարհական հիւրերուն և ամբողջ միաբանութեան:

Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ՝ Էջմիածնի լոյսով օծուեցաւ ժառանգաւորաց շենքին ճակատը: Ու կը բաժնուինք Զեզմէ այն վստահութեամբ որ այդ լոյսը պիտի ճառագայթէ յաւերժ, հասնելով մինչև հեռաւոր անկիւնները աշխարհի:

Շնորհակալութիւն բոլորին:

Երուսաղէմ, Յունիս 25, 1975

**Ապա Երուսաղէմի Քաղաքապետ Ն. Վուեմ. Թէտի Քոլէք կարձ չնորհաւորական արտայայտութիւն մը ունեցաւ, զոր եղրակացուց՝ յայտարարելով որ ի պատիւ Բարերարին, Երուսաղէմի Քաղաքապետարանը որոշած էր ժառանգաւորաց Վարժարանի երկու մեծ թեւրուն միջն ինկող հրապարակը կոչել «Ալեքս Մանուկեան իրավաբակի»: Այս յայտարարութիւնը ընդունուեցաւ բուռն և երկարատև ծափահարութիւններով:**

**Ն. Ամեն. Տ. Եղիշէ Ս. Պատրիարք Հայրը իր խօսքին մէջ ըրաւ զեղեցիկ գնահատականը ազգիս Բարերար Ն. Վուեմ. Ալեքս Մանուկեանի տասնամեւակներէ ի վեր կատարած բարեզործութիւններուն, և շեշտեց Բարերարին հիանալի խօսքը՝ թէ բարերարութիւնը մեծագոյն հոգեկան գոհունակութիւնը կը պատճառէ:**

**Գերշ. Տաւու Արքեպիսկոպոսի հրատէրով և բուռն ծափահարու-**

թիւններով գէպի բեմ յառաջացաւ ազգիս Վեհափառ Կաթողիկոսը, որ իր Հայրապետական օրհնութիւնները տուաւ Բարերար Ամոլին, գնահատեց Ս. Աթոռիսիս վճռական դերը Հայաստանեաց Եկեղեցիի բարօր կեանքին մէջ, դովեց Ս. Յակոբեանց Միաբանութեան տքնաջան աշխատանքը՝ գլխաւորութեամբ և դեկապարութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր, և վատահութիւն յայտնեց որ Աւելքս և Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարանի նոր չէնքի բացումը հանգըռուան մը պիտի ըլլար Դարենվանքի 130-ամենայ արդիւնաշատ կեանքին մէջ, և Երուսաղէմը պիտի դարձնէր Հայ Եկեղեցիի և Հայագիտական ուսումներու կեղծոնի մը:

Երգչախութրի կատարած «Հայրապետական մաղթերք»ով վերջ դաւայս տպաւորիչ, լուրջ և գեղեցիկ հանդիսութիւնը, որով պաշտօնապէս բացուած կը հոչակուէր Ավելքս և Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարանի նորակառոյց չէնքը:

Հանդիսութիւննէն ետք, բոլոր ներկաները վարժարանի սեղանատան մէջ զովացուցիչներով պատուասիրուեցան, մինչ Երուսաղէմի ոստիկանական փողերախումբը բակին մէջ հայկական եղանակները կը նուագէր, աւելցնելով ամէնուն խանգավառութիւնը: Ներկաները հիւրասիրութիւննէն ետք պատեհութիւնը ունեցան պարագելու վարժարանի յարկաբաժինները և այցելեցին դասարաններն ու ննջարանները, բոլորն ալ կահաւորուած ն. Վահեմ. Բարերարին նուիրած արդիական սքանչելի կարասիներով: Անոնք այցելեցին նաև Հրակայ և արդիական բոլոր դիւրութիւններով օժտուած հանդիսարահը, որ ամենէն ընդարձակն է Հին Քաղաքին մէջ, 700 աթոռի տարողութեամբ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ ՄԷՋ Ի ՊԱՏԻՒ


Վ.ՍԵՄ. Տիր ԵԽ ՏԿՆ. ԱԼԵՔՍ ԵԽ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆՆԵՐՈՒ

Երեկոյեան, ժամը 8-ին, Ս. Աթոռին կողմէ Պատրիարքարանի հոյակապ գահինքին մէջ չքեզ ընդունելութիւն մը տրուեցաւ ի պատիւ ազգիս Բարերար Վահեմ. Տիար Ավելքս Մանուկեանի և իր Ազն. Տիկնոջ: Ընդունելութեան կը նախագահէր ն. Ս. Օծութիւն Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը, իսկ ներկայ էին Երուսաղէմի պետական, հիւպատոսական և կրօնական մարմիններուն և հաստատութիւններու բարձրաստիճան ներկայացուցիչները, արտասահմանէն ժամանած բոլոր Հայ բարձրաստիճան եկեղեցականները, Ս. Երկրի և Ամեմանի Հայ համայնքներու բազմաթիւ անդամներ, ինչպէս նաև օտար հիւրեր: Գեղեցկօրին զարդարուած և համադամներով ծանրաբեռնուած հսկայ սեղանի մը չուրջ, ներկաները վայելեցին ուրախութեան անկրկնելի քանի մը պահեր, զազաթնակէտին հասած՝ երբ Ս. Աթոռիս Ամեն. Գահակալը անզուգական Բարերարին ընծայեց Ս. Յակոբեանց ձեռագրատան Հին և Թանկագին մանրանկարեալ ձեռագիր Աւետարան մը: Այս գեղեցիկ ժեսթը ներկաներուն կողմէ ընդունուեցաւ բուռն և երկարատե ծափահարութիւններով:

Անմոռանալի այս ընդունելութիւնը վերջ դաւա գիշերուան ժամը 11ին:

Ն. Ս. ՕՆԴՈՒԹԻՒՆԸ ՀԻՒՐ ՖՐԱՆԶԻՍԿԵԱՆ ՀԱՅՐԵՐՈՒ

Հինդշարթի, 26 Յունիս 1975, արտասահմանէն ժամանած աշխարհական հիւրերը, գլխաւորութեամբ Կ. Պոլսոյ Պատրիարք Ն. Ամեն. Տ. Շնորհք



Հ. Բ. Ը. Ռ. Լ. Միութեան ցկեանս նախագահ և հոչականուն թարերար Ն. Վահամ. Տիար Ալեքս Մանուկեան կը ցուցադրէ Ս. Արոռիս Գահակալին նուիրած զբշագիր քանկագին մատեանը :

Ա. Արքեպս. Գալուստեանի, մասնաւոր ինքնաշարժներով ուղեւորուեցան դէպի նազարէթ և ըրջակայ տեսարժան վայրերը, ուր ընդունուեցան տեղական, պետական և կրօնական ներկայացուցիչներու կողմէ :

Խսկ կէսօրին, ժամը 1-ին, Ն. Ս. Օծութիւնը Վեհափառ Հայրապետը, ընկերակցութեամբ Ս. Աթոռիս Ամեն. Պատրիարքին և բարձրաստիճան Հայ եկեղեցականներու, ճաշի հիւրը եղաւ Ֆրանչիսկեաններու կիւսթոտ Հայր Մ. Սաքիի և Միարանութեան անդամներուն, իրենց Ս. Փրկիչ վանքին մէջ :

### ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԻՍ Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵՐԿՐՈ. ՎԱՐԺԱՐԱԿ

Նոյն օրը, կէսօր ետք ժամը 6-ին Ն. Ս. Օծութիւնը իր հետեւրդներով ներկայ եղաւ և նախազահց Ս. Աթոռիս Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի ամափերջի Հանդէսին, նոյն դպրոցի Հանդիսարահին մէջ : Ներկայ էին նաև Վսեմ. Տէր և Տիկին Ալեքս Մանուկեաններու :

Ժամանակէն առաջ արդէն սրահը լեցուած էր Հանդիսականներով, երբ Ն. Ս. Օծութիւնը ժամանեց սրահ՝ ժողովրդական խանդավառ ծափահարութիւններու ընդմէջէն :

Օրուան Հանդիսութիւնը նուիրուած էր Ս. Աթոռիս Բարերար Վսեմ. Տիար Ալեքս Մանուկեանի Հ. Բ. Բ. Միութեան նախազահութեան 20-ամեակին :

Գործադրուեցաւ զրեթէ երեք ժամ տեսող ընդարձակ յայտադիր մը, որուն ընթացքին Վարժարանի երկու ուսանողներ առանձին բանախօսութիւններով ներկայացուցին Վսեմ. Նախազահին կեանքն ու զործունէութիւնը :

Վարժարանի Տեսուչ Հոգչ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գարիկեանի տեղեկադրի ընթերցումէն ետք, Ն. Ս. Օծութիւնը բաժնեց շրջանաւարաններուն վըկայականները և ասլա խօսեցաւ խանդավառ ու ներշնչող ճառ մը, ուր դովարանեց մէր ծաղկեալ և երիտասարդ մայր Հայրենիքը, յորդորեց աշակերտութիւնն ու ներկանները՝ հաւատարիմ մնալ մէր ժողովրդի աւանդութիւններուն, աչքերը միշտ յառել դէպի բոլորիս Հայրենիքը՝ Հայութեան միակ տունը, և արտասահմանի մէջ ապրիլ և զործել իրեն լաւ և պարկեշտ Հայեր, հաւատարիմ քաղաքացիներ մէր բնակած երկիրներուն :

Տպաւորիչ այս Հանդէսը վերջ գտաւ զիշերուան ժամը 8-ին :

### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԴԻՍ Ի ՊԱՏԻԹԵԱՆ Ն. Ս. ՕՇՈՒԹԵԱՆ

Ն. Ս. Օծութիւնը Հազիւ ելած Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանէն, երբ հասաւ վանքի Մեծ Բակը, զայն լեցուած գտաւ խուռն բազմութեամբ մը: Երուատղէմի Հայ համայնքը ուղելով պատուել Ն. Վեհափառութիւնը, յարմար նկատած էր ժողովրդական երգի ու պարի երկելոյթ մը կաղմակերպել:

Զօրաւոր լուսարձակներով լուսաւորուած Հսկայ բակին ճակատը պատրաստուած բեմահարթակին վրայ տեղ զրաւեց Ն. Ս. Օծութիւնը, իր երկու կողմերուն ունենալով Երուատղէմի և Կ. Պոլոս Ամեն. Պատրիարքինը: Բեմահարթակին քով տեղ զրաւեցին նաև Վսեմ. Տէր և Տիկին Ալեքս և Մարի Մանուկեանները, բարձրաստիճան Հայ եկեղեցականները և այլ հիւրեր:

Ժողովրդական այս խանդավառ Հանդէսին մաս առին Հ. Մ. Բ. Միութեան երդչախումը և Հ. Ե. Միութեան պարախումը, որոնց ներկայացուցած զուա Հայկական երգի ու պարի յայտագիրը մէծ խանդավառութիւն ըստեղծեց ներկաններուն մէջ: Յաջողութեամբ կատարուեցան նաև մեներգներ և արտասահմութիւններ:



Տեսարան մը ժողովրդական հանդէսէն, Ա. Յակոբեանց վանքի  
Մեծ թակին մէջ :

Սակայն ժողովրդական խանդավառութիւնը իր զաղաթնակէտին հասաւ երբ Ս. Աթոռի Դիւտնապետ Գերշ. Տ. Շահէ Արքեպոս. Աճէմեան յայտարարեց թէ իր ունեցած խղաներկ խկատիս նկարներու ճոխ հաւաքածոն կը նուիրէր Տիթրոյթի մէջ Վսեմ. Տիար Ալեքս Մանուկեանի ջանքերով հաստառածած հայկական թանգարանին։ Հաւաքածոն կը պարունակէր խկատիսներ այնպիսի հոչակաւոր արուեստագէտներէ, ինչպէս Յովհաննէս Այվազովսկիէ և Մարտիրոս Մարեննէ։ Այս յայտարարութիւնը ողջունուեցաւ երկարատեժափահարութիւններով և Վսեմափայլ Բարեկարը իր զգացուած չնորհակալութիւնը յայտնեց ինքնարուխ և աղնիւ այս ժեսթին համար։

Գաղութիս ազգայիններէն Տիար Հրանդ Նազգաշեան, նոյն նպատակին համար Ն. Վսեմ. Բարեկար Տիար Ալեքս Մանուկեանի նուիրեց հայկական երեսուն հին և արժէքաւոր դրամներ։

Ապա, նոյն խանդավառութեան մէջ, Երուսաղէմի Հայ զաղութին կողմէ Ն. Ս. Օծութեան նուիրուեցաւ ծանրագին արժէքաւոր շուրջառ մը, Ս. Յակոբեանց վանքի զինանշանը պարունակող ճոյլ ոսկիէ ճարմանդով։ Վեհափառ Հայրապետը, ի նշան գնահատութեան, իր ուսերուն առաւ շուրջառը ժողովրդային ծափողջոյններու ընդմէջէն։

Ցեսոյ երկար ու տպաւորիչ ճառով մը հանդէս եկաւ աղդիս Հայրապետը, որ կրկին անդամ ապրումով և խանդավառութեամբ խօսեցաւ ծաղկեալ Հայաստանի իրականութեան մասին և յորդորեց բոլորը սիրել և հաւատարիմ մնալ մեր սուրբ Հոգին։

Ժողովրդական այս սքանչելի հանդէսը վերջ դառաւ գիշերուան ժամը 11-ին։

## ԶԱՆԱԶԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Ուրբաթ, 27 Յունիս 1975, Ն. Ս. Օծութին Վեհափառ Հայրապետը նախագահէց երկու ժողովներու։

Առաջինը, որ զումարուեցաւ կէսօրէ առաջ, նիւթ ունէր Ս. Աթոռիս ժառանդաւորաց Վարժարանի և Ընծայարանի հետ կապուած զանազան հարցեր, որուն կը մասնակցէին, Ամեն. Պատրիարք Ս. Հօր և Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոսի կողքին՝ նաև Գերշ. Տ. Վահէ Եպիսկոպոս, ինչպէս նաև Վ. Վսեմ. Տիար Ալեքս Մանուկեան և Մեծ. Տիար Տատուր Տատուրեան։

Իսկ նոյն օր երեկոյեան զումարուեցաւ Եպիսկոպոսական ժողովի նիստ մը, քննելու համար այդ ժողովի նախկին նիստերէն բխած զանազան հարցեր։

## ՄԵԿՆՈՒՄ Ս. ԱԹՈՌԻՍ ԲԱՐԵՐԱՅՐ

Վ.ՍԵՄ. Տէր ԵՒ Տիկին ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿԵԱՆՆԵՐՈՒ

Ուրբաթ, 27 Յունիս 1975, կէսօրին, Ս. Աթոռիս Բարեկար Վսեմ. Տէր և Տիկին Ալեքս Մանուկեաններ հրաժեշտ առին Ն. Ս. Օծութեան և Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հօր և Հողէ. Տ. կիւրեղ Ծ. Վրդ. Գարիկեանի ուղեկցութեամբ ուղեւորուեցան դէպի Պեն կուրիօն օդակայտն, վերադառնալու համար Միացեալ նահանգներ։

Վսեմ. Բարեկար Ամոլը իր հետ կը տանէր խորունկ և տեսական տպաւորութիւններ երուսաղէմէն և մասնաւորաբար Ս. Աթոռէն։



Փառաւոր լավօրը կը յառաջանայ երուսաղէմի Հին Քաղաքի փողոցներէն, դէպի Ա. Յարուբեան Տանը :

### ՄԵԿԱՌՈՒՄ ԲԱՐԵԲԱՐ ՏԵԱՄ ՏԱՏՈՒԻ ՏԱՏՈՒԻՔԵԱՆԻ

Ուրբաթ, 27 Յունիս 1975, առաւօտեան, Ս. Աթոռիս Դիւանագետ Գերշ. Տ. Շահէ Արքեպոս. Ամէմեանի ուղեկցութեամբ Բարեբար Տիար Տառուր Տատուրեան Հրաժեշտ առաւ Երուսաղէմէն և Ամմանի ճամբով վերադարձաւ Նիւ Եորք:

### ԱԱՐԿԱԽԱԳԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Շարբաթ, 28 Յունիս 1975, առաւօտեան, Ս. Յակոբեանց Տաճարին մէջ Հոգէ. Տ. Փառէն Վլոդ. Աւետիքեանի կողմէ պաշտուած Ս. Պատարագի ընթացքին, Ժառանդաւորաց Վարժարանի և Ընծայարանի Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ Արքեպոս. Ամէմեան կիսասարկաւագութեան և առա սարկաւագութեան աստիճան շնորհեց Ընծայարանի Առաջին կարգի ուսանողներ Բարեչնորհ Աւրոր Գալէմտէրեանին, Յակոր Տուրունեանին և Ամերիկահայ ուսանող Պարոյր Մելքոնեանին:

### ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՆԱԽԱԿԱՏԻՔ ԵՒ ՕՇՈՒՄ Ս. ՑԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ

#### ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐԱՆՆԵՐՈՒՆ

Աւելի քան տաս տարիներու տքնաջան աշխատութիւններէ և անհուն զոհողութիւններէ ետք, ի վերջոյ հասած է օրը հպարտութեան և հոգեկան հրճուանքի, երբ, համայն քրիստոնէութեան հոգեկան կեղրոն՝ հնագարեան Ս. Յարութեան Տաճարի հիմնուին վերանորոգուած հայկական խորանները պիտի օծուէին սրբալոյս միւռոնով, ներկայութեամբ և ձեռամբ ազգիս Վեհափառ Հայրապետին:

Շարբաթ, 28 Յունիս 1975, կէսօրէ Էտք ժամը 4-ին, Ս. Յակոբեանց մայրավանքէն ընթացք կ'առնէ շքեղ թափօրը, զլիաւորութեամբ Վեհափառ Հօր, և մասնակցութեամբ Երուսաղէմի և Կ. Պոլոսյ Ամեն. Պատրիարքներուն, Հայ Եկեղեցիի բարձրաստիճան կրօնականներուն, Ս. Յակոբեանց Միարանութեան անդամներուն և հիւր քահանաներուն, ժառանդաւորներուն և երգչախումբին: Թափօրին կը հետեւին բաղմահարիւր հաւատացեալ հայորդիներ:

Թափօրը, իր զգեստներու, խաչերու, խաչվառներու շքեղութեամբ աննախօնթաց՝ դարաւոր Երուսաղէմի մէջ, յամբընթաց կ'անցնի Հին Քաղաքի փողոցներէն և կը յառաջանայ դէպի Ս. Յարութեան Տաճար, շաբականներու երկեցողութեամբ:

Հասնելով Ս. Յարութեան Տաճար, թափօրը կանգ կ'առնէ պահ մը Պատանատեղին առջև, ապա «Հրաշափառ»ով կը յառաջանայ դէպի մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի Լոյս Գերեզման, ուր ազգիս Վեհափառ Հայրապետը կը կատարէ իր ուխտն ու աղօթքը: Ապա թափօրը շրջանը կ'ընէ Ս. Գերեզմանին և ապա կը բարձրանայ Երկրորդ Գողգոթա, ամբողջութեամբ հայապատկան: Հոն արդէն ներկայ են Երուսաղէմի բոլոր կրօնական ներկայացուցիչները և այլ հիւրեր:



Ա. Յարութեան Տաճարի հայապատկան Երկրորդ Գողգոռայի նորակառոյց  
Երաշխաւոր Ս. Աստուածածին խորանը :

Նախ կը պաշտուի երեկոյեան հանդիսաւոր ժամերգութիւն, և ապա վեհափառ Հայրապետը, օժանդակութեամբ և մասնակցութեամբ Ամեն. Պատրիարքներուն, սրբալոյս միւռոնով կ'օծէ չքեղօրէն վերանորոգուած զոյզ խորանները, հիանալի նմուշներ հայկական եկեղեցական ճարտարապետութեան:

Ապա, վեհափառ Հայրապետը կը խօսի ներշնչուած քարոզ մը, իր խոր զոհունակութիւնը և ուրախութիւնը յայտնելով տասնամեւակէ մը աւելի տեսած աշխատանքին և հիանալի արդիւնքին համար:

Թափօրը, նոյն հանդիսական դնացքով կը վերադառնայ Ս. Յակոբեանց Վանք, մինչ ժառանգաւորներ առաջորդութեամբ վեհափառ Հայրապետի դաւազանակիր Հոգէ. Տ. Անանիա Արդ. Արարաջնանի, տնօրինական սրբատեղիներու շարաթական թափօր կը կատարեն Ս. Յարութեան Տաճարին մէջ:

### ՃԱՇԿԵՐՈՅԹԻ ՊԱՏԻՒ ՎԵՀԱՓԱԾՈ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ՀԱՅ ՀԵԽԵՐՈՅԻՆ

Շարաթ, 28 Յունիս 1975, երեկոյեան ժամը 7-ին, ի պատիւ Ն. Ս. Օ-ծութիւն վեհափառ Հայրապետին և արտասահմանէն ժամանած Հայ բարձրաստիճան կրօնական և աշխարհական հիւրերուն Ս. Աթոռիս կողմէ հաշկերոյթ մը սարքուեցաւ Ալեքս և Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարանի նորակառոյց չէնքի ճաշարահին մէջ:

Ներկայ էին մօտաւորապէս երկու հարիւր Հայ հրաւիրեայներ, Դրաբեկանքի ուսուցչական կաղմը, ինչպէս նաև Ժառանգաւորաց Վարժարանի և Բնծայարանի ուսանողութիւնն ու Տատուրեան սաները:

Ընթրիքի ընթացքին խօսք առաւ Արևմտեան Եւրոպայի Կաթողիկոսական Պատուիրակ և Ֆրանսայի Հայոց Առաջնորդ Գերք. Տ. Անրովք Արքակոս. Մանուկեան, որ իրքի նախկին բազմարդիւն Վերատեսուչ, խանդափառ բառերով և յուղումով գրուաթիքը ըրաւ Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանի հարիւր երեսուն տարուան արդիւնաւոր գործունէկութեան, մեր հանեց անոր կատարած դերը Հայաստանեայց Եկեղեցիի կեանքին մէջ, և հպարտութեամբ յիշեց որ այսօր մեր Եկեղեցիի իշխանաւորներուն մեծապոյն մասը Երուսաղէմի Դպրեվանքին ըրջանաւարտ է: Ան սրտագին կոչ ուղղեց ներկաներուն՝ բարյապէս և նիւթապէս զօրապիզ կանցնիլ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան և անոր իմաստուն զահակալին՝ Ն. Ամեն. Տ. Եղիշէ Ս. Պատրիարք Հօր, որպէսպի կարենան լաւագոյն կերպով շարունակել ընդարձակել իրենց եկեղեցանուէր և ազգաշին գործունէկութիւնը:

Ապա հրաւիրուեցաւ «իջմիածին» պաշտօնաթերթի խմբագիր և ժառանգաւորաց Վարժարանի նախկին ըրջանաւարտ Տիար Արթուր Հատիւն Հատիւնան, որ իր կարգին խանդավառ ճառուի մը հանդէս եկաւ:

Յետոյ, Ամեն. Պատրիարք Ս. Հօր հրաւիրով վեհափառ Հայրապետը նախ յուշանուէրներ բամնեց ձեռնադրուած սարկաւաղներուն, և ապա յորդուրական անկեղծ խօսքի յուղեց ներկաները:

Սրտապնդով այս հաւաքոյթը վերջ գտաւ զիշերուան ժամը 9-ին:

### ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՔՐԻՍՏՈՍԻ Ս. ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ՎՐԱՅ

Կիրակի, 29 Յունիս 1975, առաւօտեան ժամը 9-ին վեհափառ Հայրապետը, ի գլուխ ներկայ ամբողջ Եկեղեցական դասին, հանդիսաւոր մուտք կը զործէ Ս. Յարութեան Տաճարէն ներս, և հայկական բաժնի գեղեցկօրէն վերանորոգուած Տեսչարանին մէջ զգեստաւորուելէ ետք, սուրբ և անմահ Պատարագ կը ժամանացանէ Քրիստոսի Սրբալոյս Գերեզմանին վրայ, առընթերա-



Ն. Ա. Օծուրին Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Հայրապետը կը  
կատարէ օծումը Ա. Յարութեան Տաճարի հայտապատկան Բ. Գողգո-  
րայի նորակառոյց Երաշխաւոր Ա. Աստուածածին Խորանին :

կայութեամբ Գերշ. Տ. Տ. Տիրայր և Վաչէ Սրբազան Եպիսկոպոսներուն: Նորին Վեհափառութեան կը սպասարկեն Հոգէ. Տ. Տ. Փառէն, Վահան, Մեսն և Վիգէն վարդապետները:

Ապօ Ն. Ս. Օծութիւնը կը խօսի հետեւեալ գեղեցիկ քարոզը.

Յանուն Հօր, և Որդույ և Հոգույն Սրբոյ, Ամէն.

«Լուսով զքո Քրիստոս ամենեքեան լուսաւորեցան»:

Սիրելի հոգնոր Եղբայրներ և հաւատացեալ ժողովուրդ,

Աստուծոյ ոռորմութեամբ և հրաւերովը Ն. Ամեն. Տ. Եղիշէ Սրբազան Պատրիարքի, մենք երկրորդ անգամ ըլլալով ահաւասիկ ուխտի եկանք Սուրբ Թաղաք, և այս պահուն հոգեկան անփոխարինելի միսիթարութիւնը ունինք սուրբ և անմահ Պատարագ մատուցանելու մեր Տիրոց և Փրկչի Յիշուսի Քրիստոսի Գերեզմանին վրայ: Եւ անգամ մը ևս կը յիշենք աղօթքը որով սկսանք մեր խօսքը այսօր. «Լուսով զքո Քրիստոս ամենեքեան լուսաւորեցան»:

Թերևս աւելի քան այլուր, խորունկ իմաստ և Եշանակութիւն և կենդանութիւն ունի այս մաղթանքը Քրիստոսի դատարկ Գերեզմանին առջև: Խսկապէս կը գտնուինք Ս. Յարութեան այս բազմադարեան և համայն քրիստոնեայ աշխարհին համար Շուշրական Սուրբ Տաճարի կամարներուն ներքև, Քրիստոսի Գերեզմանի առաջ, և կը զգանք կենդանութիւնը Քրիստոսի լոյսին, որ կը բաշխուի մեզի այս դատարկ Գերեզմաննեն: Թէև մօտ երկու հազար տարիներ անցան այդ երանելի օրերէն, սակայն այդ լոյսին խորհուրդը, այդ լոյսին կենդանութիւնը, այդ լոյսին կենարար ուժը կը զգանք մենք բոլորս նաև այսօր, և ոչ միայն որովհետև կը գտնուինք այս սուրբ տեղեաց մէջ, այլ մանաւանդ որովհետև այդ լոյսը բաշխուեցաւ և կը շարունակէ բաշխուիլ համայն աշխարհին, հաւասար ուժգնութեամբ, հաւասար գօրութեամբ և կենդանութեամբ, ահա երկու հազար տարիներէ ի վեր:

Պահ մը գուցէ, աւելի քան այլուր այստեղ, կը վերապրինք այն հոգեկան վիճակը որուն մէջ կը գտնուին մեծ Վարդապետի աշակերտները՝ Քրիստոսի Յարութենէն անմիջապէս յետոյ: Անոնք չունեին այլևս իրենց մէջ իրենց Վարդապետը, մնացած էր միայն անոր յիշատակը, անոր խօսքերուն քաղցրութիւնը, անոր դէմքի բարութիւնը, անոր հոգիի ջերմութիւնը, անոր աստուածութեան զգացումը: Եւ կը միսիթարուտին մանաւանդ Սուրբ Հոգոյ գալուստէն յետոյ, կը միսիթարուտին և միսիթարութեան այն գիտակցութեամբ թէ իրենք ճշմարիտ աշակերտները դարձան իրենց Տիրոց և Փրկչին, և աւետարանողները, բարի լուրը՝ Տիրոց Յարութեան, այսինքն Տիրոց յաւիտենական կենդանութեան:

Եւ այդ գաղափարը, առաքելութիւնը իրենց ճամրուն վրայ դարձաւ ուղեցոյց, դարձաւ լոյս, որով առաջնորդուեցան և այն ժամանակուայ համայն աշխարհը Միշերկրական ծովու շուրջ, մէկ-երկու դար բարոզութեան շրջանէ յետոյ, իր սիրութ բացաւ նոր Ուխտի, Քրիստոսի Աւետարանի լոյսին:

Մեր ժողովուրդն ալ, Հայ ազգը, Հայաստան աշխարհը, անմասն շմնաց այդ լոյսէն, և Ս. Թադէոս և Ս. Բարթումէոս առաքեալներու քարոզութեամբ ացիկա տարածուեցաւ Հայ ժողովուրդի մէջ, և ինչպէս ծանօթ է պատմութենէն, հրաշալի պայմաններու ներքոյ Դ. դարու սկիզբին քրիստոնէութիւնը դարձաւ հա-



Ն. Ա. Օծուրին վեհափառ կարողիկոսը, Քրիստոսի Գերեզմանին վրայ մատուցած Հայրապետական Սուրբ Պատարագին ետք, Ա. Յարութեան Տաճարի հայկական Տեսչարանին առջև, Երուսաղէմի և Կ. Պոլսյ Ամենապատիւ Պատրիարքներուն իետ :

մայն Հայ ժողովուրդի և պետութեան կրօնքը, Սուլը Գրիգոր Լուսաւորչի և Տըր-դատ թագաւորի երանելի օրերուն:

Մենք այսօր ալ նոյն ժողովուրդն ենք թէ՝ ի Հայաստան և թէ ի սփիւս աշխարհի, և նոյն ջերմութեամբ մեր սիրտեր կը բանանք այդ փրկարար լոյսին և կ'ալոյթենք առ Աստուած որպէսզի շտկարացնէ զմեզ ո՛ւր ալ գտնուինք, աշխարհի ի՛նչ ճամբաներու ալ վրայ, ի՛նչ պայմաններու ալ տակ: Զտկարանանք մեր լոյս հաւատքը խոստովանելու աշխարհի և պատմութեան առջև, որովհետև կը հաւատանք թէ մարդկութեան իսկական փրկութեան և խաղաղութեան նաւահանգիստ տանող ճանապարհը Քրիստոսի լոյսով գտնուած ճանապարհն է, և որովհետև կը հաւատանք նաև թէ մեր ժողովուրդն ալ, ինչպէս երկու հազար տարիներ շարունակ ապրեցաւ և աշխարհի վրայ իր կեանքի իմաստը և գեղեցկութիւնը գտաւ, անկորնչելի արժեքներ ստեղծեց և իր ամբողջ հերոսական պատմութիւնն իսկ ստեղծեց այդ նոյն հաւատքով, նոյն Քրիստոսի լոյսով առաջնորդուած, այնպէս և այսօր և վաղը և յաւիտեան մեր ճանապարհը նոյնը պէտք է ըլլայ, որպէսզի Հայ ազգը շարունակէ այս արևին տակ իր հոգնոր, մշակութային և ազգային առաքելութիւնը, եղբայր ժողովուրդներու հետ կողը կողը:

Եւ որովհետև լոյսի և լուսաւորութեան մասին կը խօսինք, այս պահուն մենք չենք կրնար սրտի խոր գորունակութեամբ չքերել մեր խնդութեան, մեր ոգևորութեան և գնահատանքի վկայութիւնը ի տես այն լոյսին՝ որ իշած է այս օրերուն Սուլը Յարութեան Տաճարի հայկական մասի բոլոր բաժիններուն վրայ, իբրև հետևանքը մանաւանդ վերջին տաս տարիներու ժրաջան և երբեք չյօվացող նուիրեալ աշխատանքին՝ որ կատարուեցաւ հոգնոր վերին իշխանութեանը ներքև Առաքելական մեր Սուլը Աթոռոյն յերուսաղէմ և Ամեն. Տ. Եղիշէ Սրբազն Պատրիարքի, մասնակցութեամբ իր գործակիցներուն, ճարտարապետներուն, վարպետներուն և աշխատող բոլոր ձեռքերուն:

Խսկապէ մենք պտղտելով այս վերանորոգեալ և վերազարդեալ բաժինները, դիտելով նորած սեղանները, խորապէս հրճուեցանք, որովհետև այս վերանորոգումներու իբրև հետևանք՝ առաւել պայծառացաւ Հայ հաւատքին դրոշմը այս բազմադարեան Սուլը Տաճարին մէջ: Մանաւանդ այս բոլոր վերակառուցման, բարենորոգման և բարեզարդման աշխատանքները կատարուած են ոչ միայն ընդհանրապէս մեծ ճաշակով, այլ մանաւանդ անոնք կը կրեն դրոշմը հայկական ճարտարապետութեան, քանդակագործութեան և նկարչութեան հանճարին: Անոնք կարծէք ուղղակի շարունակութիւնն են Հայաստանի պատմական հնադարեան տաճարներուն և քանդակներուն:

Մենք անգամ մը ևս, այս սուլը և անմահ Պատարագի առիթով, մեր խնդակցութիւնը կը բերենք երուսաղէմի Հայոց Առաքելական Ս. Աթոռին, և Ամենապատուութիւն Սրբազն Պատրիարքին, այս աշխատանքներուն իրենց անմիջական գործակցութիւնը բերող Շահէ Արքապս. Անձմեանին և մասնաւոր նաև ժրաջան աշխատող Կիւրեղ Ծ. Կրդ. Գարիկեանին, որոնք ոչինչ խնայեցին և զոհաբերութեան ոգիով տողորուած՝ իրենց պարտքը կատարեցին լիութեամբ ոչ միայն իրենց Ս. Աթոռին, այլ համայն Հայաստանեայց Եկեղեցւոյ և Հայ հաւատցեալ ժողովուրդի հանճէպ: Վարձերնին կատար: Թող Աստուած օրհնէ Հայաստանեայց Սուլը Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, մեր նուիրապետական բոլոր Աթոռները, յատկապէս թող օրհնէ Երուսաղէմի Առաքելական Սուլը Աթոռը, Սըրբոց Յակոբեանց Միաբանութիւնը և բոլորին շնորհէ անսպառ ուժ, եռանդ և նորանոր ներշնչումներ՝ որպէսզի բարձր, միշտ բարձր և վառ պահեն ու պահպանէն քրիստոնէական Հայ հաւատքի ջահը այս սուլը տեղեաց մէջ, և որպէսզի շարունակեն իրենց նուիրական ու պատմական առաքելութիւնը հոգնոր, կրթական

և մշակութային ճանապարհներով, ծառայելու համար մեր Ս. Եկեղեցին ընդհանրապէս և մեր ժողովուրդին, յատկապէս ի սփիտս աշխարհի մեր պանդուստ ժողովուրդին:

Ահա այս մաղյանքներով անգամ մը ևս մեր հայեացքը առ Աստուած կը բարձրացնենք և կ'աղօթենք որպէսզի մեր ժողովուրդը նաև յետ այսու իր կեանքի ճամբան շարունակէ միշտ լուսաւորուած Քրիստոսի լոյսով, Քրիստոսի յաւիտենական լոյսով: Քրիստոս ըսաւ. «Ես կենդանի եմ և կենդանի այտի մնամ»: Այս ճշմարիտ է նաև բոլոր անոնց համար՝ որոնք կ'ընդունին Քրիստոսի լոյսը և նը հետևին անոր ճանապարհին, որով բոլորը պիտի գտնեն իրենց հոգիներու փյուկութեան ճամբան, իրենց հոգիներու փառաւորման ճամբան, իրենց կեանքի խաղաղութեան ճամբան:

Զերմապէս և ծնրադիր կ'աղօթենք Քրիստոսի Սուլր Գերեզմանին առջն, որպէսզի Աստուած և ինքը Տէրը մեր Յիսուս Քրիստոս, Սուլր Հոգու Շերզործութեամբ, խաղաղութեան ոգի պարգևէ աշխարհի բոլոր ժողովուրդներուն, բոլոր պետութիւններուն, որպէսզի յետ այսու անցեալի մէջ տառապած աշխարհը այլևս երբեք պատերազմներ և արիւնահեղութիւններ չտեսնէ, բոլոր ազգերը եղբայրանան միևնոյն Աստուծոյ օրինութեան ներքև, և այս բոլորին վրայ հաւասարապէս իր լոյսը և զերմութիւնը տարածող արևին տակ ամէնքը մէկտեղ եղբայրաբար ապրին, խաղաղ գոյակցութեան և համերաշխ գործակցութեան մէջ, յերանկութիւն բոլորին, այժմ և յաւիտեան, Ամէն:

**Պատարազը և Հայրապետական քարոզը կը ճայնասփոռուին Խորայէլ-եան ռատիոկայանէն :**

**Ս. Պատարազի աւարտին, Ն. Ա. Օծութեան ճախազահութեամբ եռադարձ հանդիսաւոր թափօր կը կատարուի Ս. Գերեզմանին չուրջ, որմէ հոտք, հայկական Տեսչարանին մէջ պահ մը հանգստանալէ եաք, վեհափառ Հայրապետը ժամը 1-ին իր հետեւորդներով Մայրավանք կը վերաբառնայ :**

**ՃԱՇԿԵՐՈՑԹ Ի ՊԱՏԻՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴԱՍԻՆ,**

**ՃԻՒՐԵՐՈՒՆ ԵՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ**

**Ասպա, Ս. Աթոռիս սեղանատան մէջ տեղի կ'ունենայ ճաշկերոյթ՝ ի պատիւ հիւր եկեղեցական դասին, հիւրերուն և Ս. Յակոբեանց Միաբանութեան։ Ներկայ կ'ըլլան նաև երգչախումբի ժրաֆան անդամները։ Ճաշկերոյթի ընթացքին յարգանքի, գնահատութեան և հրճուանքի իր հետեւալ խօսքը կ'ընէ Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Շնորհք Արքեպոս. Գալուստեան։**

Հակառակ այն իրողութեան, որ մենք շատոնց ի վեր մեծ փափար ունենք Երուսաղէմ այցելելու, սակայն երբ ստացանք Երուսաղէմի Ամեն. Պատրիարքի եղբայրական հրաւերի հեռագիրը՝ վարանումը մեզ պաշարեց։ Երթա՞լ, թէ չերթալ։ Քիչեր այնքան զօրաւոր պատճառներ ունեին չերթալու, որքան՝ մենք։ Սակայն մէկդի հրեցինք վարանումի այդ պատճառները, ընթացք տալու համար այն միւս մտածումներուն, որոնք կը մղէին զմեզ ընդունիլ Երուսաղէմի Ամեն. Պատրիարքի հրաւերը։ Ու սա պահուս մենք երջանիկ ենք այդ հրաւերը ընդունած ըլլանուս համար։

Այս ընդունելութեան մէջ բնականարար իրենց կարևոր բաժինը ունեցան զգացական ու անձնական պատճառներ, որոնց անդրադանք մենք մեր ժամանման առաջին օրը, մեր ուխտը և աղօթը կատարելու ատեն Սրբոց Յակոբ-

Եանց Մայր Տաճարին մէջ: Երբ կեանցիդ 60-62 տարիներուն աւելի քան քառորդ անցուցած ես միջավայրի մը մէջ, այդ միջավայրը պիտի պահէ իր քաշողականութիւնը և հրապոյրը քեզի համար: Երբ կեանցիդ աւելի քան կէսը պաշտօնապէս ու գործնականապէս կապուած ես հաստատութեան մը, որուն տարեկան օրացոյցին մէջ անխափան երևած է անունդ 1927-1960 տարիներու ընթացքին, չես կրնար մոռնալ այդ հաստատութիւնը: Արդարն ես զիս միշտ անդամ Ըկառած են Սրբոց Յակոբեանց Միաբանութեան: Սրտիս կապերը երբեք չեն խզուած անոր հետ, որովհետև այն քիչը որ կրցած եմ ըլլալ նախ կը պարտիմ Աստուծոյ և ապա՝ Սրբոց Յակոբեանց Կանցին:

Սակայն այս անձնական ու զգացական պատճառներէն աւելի լուրջ ու գորաւոր էին այն միւս խորհուրդները, որոնք թէ ադրեցին մէջի սիրով ընդառաջելու երայրական այս հրաւերին: Մենք պարտական զգացինք այս օրերուն այստեղ Եերկայ գտնուիլ, իբրև Հայաստաննեայց Եկեղեցւոյ Շուրապետական Աթոռներէն մէկին գահակալը, անգամ մը ևս հաստատու ու գործնականապէս: Հայաստաննեայց Առաքե ական Եկեղեցիի միասնականութիւնը ընդ հովանեաւ Ամենայն Հայոց Հայրապետութեան: Այլևս այնքան մը հասունցած պէտք է ըլլանք իրացնելու և կենացրծենու համար սա հիմնական զաղափարը, թէ Հայաստաննեայց Առաքեական ու տառապետա Եկեղեցիի միասնականութիւնը բարձրագոյն սկզբունքն է, որուն համար պէտք է գրինք, բացի ճշմարտութենէն, ամէն Շևառում: Մենք ուզեցինք ուրեմն այս առիթը օգտագործել ամենէն առաջ շեշտելու և դրսերելու համար Հայաստաննեայց Եկեղեցիի միասնականութիւնը, առ Շուազն անոր Եջմիածնի անմիջական իրաւասութեան Եերքը գտնուող մայր և մեծագոյն հատուածին: Այս գերազոյն նպատակը իրագործելու համար մենք ողջագուրուեցանք Երուսաղեմի Ամեն. Պատրիարքին հետ մեր առաջին հանդիպումին, ու յիշատանեցիք իր անունը՝ անցեալ Կիրակի, Սաղմական Լոգեզալստեան տօնին, երբ Ս. Պատարագ կը մատրացանէինք Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Ու ցըրելու համար մտցերու մէջ յամեցող հաւանական ամէն թիւրիմացութիւն այս մասին, մեր առաջին գործը պիտի ըլլայ, մեր Աթոռոք վերադարձին, հրահանգելոր վերսկսի յիշատակութիւնը նաև Երուսաղեմի Պատրիարքի անուան, ի ժամ Ս. Պատարագի, մեր բոլոր Եկեղեցիներուն մէջ, թէ իսկ բոլորովին տարբեր եղած ըլլայ մեր տեսակէտը կանոնական այս հարցի մասին: Այս տնօրէնութեամբ մեր նպատակն է լոկ գործնականապէս յայտարարած ըլլալ, որ վերջ գտած է երկու Աթոռներու միջև զոյցած ցրտութիւնը և տիրապետած է հաշտութեան, համերաշխութեան ու գործակցութեան մթնոլորտը:

Բացի հիմնական ու կենդրոնական այս մտածումէն մենք ունեցանք նաև ուրիշ կարևոր շարժադիմներ այսօր այստեղ գտնուելու:

Մենք ուզեցինք խառնել նաև մեր խնդակութիւնը այն հասարակաց ուրախութեան, որ գիտէինք թէ պիտի ստեղծուէր Ալեքս և Սարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի նորակերտ շէնքին բացման առիթով: Մենք ուզեցինք անձամբ շնորհաւորել և մեր գնահատանքն արտայայտել Տէր և Տիկ. Ալեքս Մանուկեաններուն, իրենց այս մեծագործութեան պսակումին առիթով: Տէր և Տիկ. Մանուկեաններ առաջին օրէն լաւ հասկցան կարևորութիւնը և կենսականութիւնը նաև այն կրթական ու մարդասիրական գործին, զոր մենք կը կատարենք Թուրքիոյ մէջ, և իրենց բարոյական ու նիւթական օժանդակութիւնը անպակաս ըրին ամէն անգամ որ մենք պէտք ունեցանք անոնց: Մեր բարոյական պարտը մասամբ մը հատուցած եղանք անձամբ Եերկայ ըլլալով իրենց հոյակապ ծեռակերտին բացման փառաւոր հանդիսութեան:

Մենք ուզեցինք նաև անձամբ տեսնել մեր որկած «Տատութեան Սա-

ներ»ը, և մեր գնահատանքը և օրինութիւնը տալ Պր. Տատուրեանին իր այս սքանչելի ծեռնարկին համար, որ կը կատարուի Սրբոց Յակոբեանց յարկին տակ ընդ հովանեաւ Երուսաղէմի Սուաքելական Ալոռոյ Ամենապատիւ Պատրիարքին: Մենք Պր. Տատուր Տատուրեանին հետ ներկայ եղանք այս բոյնի ձագով ներուն՝ և անկէ հասունած ժառանգաւորաց Վարժարանի սաներու սիրոյ սեղաններուն, և արտայայտեցինք մեր գնահատանքը և գործնակութիւնը կատարուած շնորհակալ աշխատանքին համար, թէ՛ Պր. Տատուրեանին և թէ՛ սոյն հաստատութեանց անձնակազմին: Արդարն, յորմէ յետէ փակութեան դոները արարական երկիրներու, որոնցմէ առհասարակ կու գային ժառանգաւորաց Վարժարանի աշակերտները, լայնօրէն բացութեան դոները Թուրքիոյ հայութեան, ուրկէ սկսաւ Երուսաղէմ ըստանալ իր Ծոր ժառանգաւորցուները: 1967 թուականէց ասդին մենք շուրջ 200 ուսանողներ դրկած ենք Երուսաղէմ, և պիտի շարունակենք դրկել պարագաներու և պայմաններու թոյլատրած չափով: Ասիկա ոչ միայն Երուսաղէմի օժանդակութեան հարց մըն է, այլ նաև իմաստով մը ինքնօգնութիւն մըն է, քանի որ մեր Ս. Խաչ Դպրեվանքը մեր երկրի Կրթական Տնօրենութեան որոշումով դադրած է այլևս կրօնական վարժարան լինելէ: Ուստի մենք ևս Երուսաղէմէն պիտի ակնկալենք մեր կուսակրօն հոգևորականներու պահանջքը. որով Երուսաղէմի ժառանգաւորաց Վարժարանը կը վերածուի նաև մեր հոգևոր դպրանոցին:

Միս կողմէն մենք ուզեցինք սիրով ընդհառաջել Երուսաղէմի Ամեն. Պատրիարքի հրաւերին, իբրև ներկայացնութիչը Թուրքիոյ հայութեան, որ ինչպէս ծանօթ է, անցեալին մէջ կարևորագոյն դերը կատարած է Երուսաղէմի Աթոռին և անոր սրբատեղեաց պաշտպանութեան, պահպանութեան և պայծառութեան մէջ: Պոլսոյ Պատրիարքները և ամիրաները իրենց դիմումներով պատկան իշխանութեանց մօտ, ինչպէս նաև մեծահարուստները ու անթիւ անհամար ուկտաւորներ իրենց նիւթական նուիրատութեամբը, միշտ ոտքի և կանգուն պահած են պահանջի այս հաստատութիւնը: Ու Պոլսոյ մեր Աթոռը և ժողովուրդը թէն կ'ապրի ներկայիս իր նուազման շրջանը, բայց երբեք չէ դադրած մասնաւոր կերպով հետաքրքրութել Երուսաղէմի Սուաքելական Աթոռով և Ս. Տեղերով:

Հետևաբար նոյնքան կարևոր այս պարագան շարժման մէջ դրաւ զմեզ սիրով և յատուկ հետաքրքրութեամբ Երուսաղէմ գալու: Գիտեինք թէ երկար ատենէ ի վեր նորոգութեան մէջ էին Ս. Յարութեան Տաճարի մեր ազգապատկան մասերը և մատուցները: Մենք մասնաւոր հետաքրքրութիւն և հոգածութիւն ունեցած ենք Ս. Տեղեաց նկատմամբ. և հետևաբար քայլ առ քայլ հետևած էինք հեռուէն՝ այստեղ կատարուող նորոգութեանց կարևոր աշխատանքներուն, որոնց հիմքերը, պարագաներու բերմամբ, մեր լուսարարապետութեան օրերուն դրուած էին: Այս նորոգութեանց մեծագոյն մասամբ աւարտումը, և նորակառոյց Ս. Սեղաններուն օծումը Ամենայն Հայոց Հայրապետի ծեռամբ, կարևոր հանգրուան մըն էր ոչ միայն Հայ Երուսաղէմի տարեգութեանց մէջ, այլ նաև Հայ Եկեղեցիի պատմութեան մէջ: Ս. Տեղերը կարծուածէն աւելի կարևորութիւն ունին շատ մը տեսակէտներով. ասոնց հիմնականը եթէ այդ տեղերուն յուշավայրերն ըլլալն է մեր Տիրոջ փրկագործութեան մեծ խորհուրդին, միւսն է ցուցանիշ հանդիսանալը Հայաստանայց Եկեղեցին գրաւած կարևոր դիրքին Քրիստոնէական հին Եկեղեցիներու ամբողջութեան մէջ:

Այս անկինակէտէ ևս դիտուած՝ պարտաւոր էինք մենք ալ ներկայ գյունուիլ ազգապատկան Ս. Տեղերու վերանորոգութեան և օծման նաւակատիթին, իբրև մէկ օղակը Հայաստանեայց Եկեղեցիի նուիրապետական կառուցին: Ականատես ըլլալէ յետոյ կատարուած աշխատանքներու արդիւնքին, կրօնանք վկայել, որ այս ընդհանուր նորոգչական գործին մէջէն մեր Եկեղեցին ամենէն շահաւորը և

ամենէն գեղարուեստասէրը դուրս եկած է, նախկին խուցերու և խորաններու, ինչպէս նաև մանր մատուռներու լաբիւրինթոսէն վերակազմած ըլլալով գեղեցկագոյն վերնատան եկեղեցին ամբողջ Տաճարին մէջ: Ու Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին ունեցած պատմական դիրքը աւելի քան երբեք ամրապնդուած է Քրիստոնեութեան մեծագոյն այս սրբավայրին մէջ: Մենք սիրով կը շնորհաւորենք Ս. Աթոռին Գահակալը, Միաբանութիւնը ու յատկապէս նորոգչական աշխատանքին վերակացուները և գործադրիչները, ծեռք բերուած այս նշանակելի արդիւնքին համար:

Յաւարու մեր խօսքին՝ թող ներով մեզի կարճառու մտածում մը: Ներկայ լինելով ու մասնակցելով այս փառահեղ հանդիսութեանց, մենք ապրեցանք հոգեկան հրճուանքի հազուագիտ պահեր: Բայց միաժամանակ մենք զմեզ դրած եղանք, հաւաքարար, պատասխանատուութեան մը ներքեւ:

Երոսաղէմի ժառանգաւորաց Վարժարանը մեր այն հոգևոր դպրանցն է, որ օժոտած է առաւելագոյն կարելիութիւններով Եկեղեցականներ պատրաստելու: Ամէն ինչ որ անհրաժեշտ է դպրեվանքի մը համար ունի ան: Կրօնական ու Եկեղեցական շրջանակ, մշակութային ճիխ մթերք, մեծ մատենադարան, ամենօրեայ աղօթք ու պաշտամունք, անցեալ և աւանդութիւն, այլովքն հանդերձ: Այս բոլորը պսակուեցան այս օրերս ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի փառաւոր և ընդարձակ շենքով, օժոտած և օժոտուիլի՝ արդիական գրեթէ բոլոր պայմաններով: Հարցը, որ Կ'ենթադրեմ թէ ամենքիս մտցերուն մէջ կը ծագի այն է, թէ ինչպէս ընել, որ ժառանգաւորաց Վարժարանը առաւելագոյն և լաւգոյն չափով ծառայէ իր իսկական նպատակին: Տարակոյն վեր է, թէ ամէն կողմէն շատ կարիք կայ լաւ կազմաւորուած հոգևորականներու և մտքի մշակներու: Թերևս մինչև հիմա կիրարկուած միջոցներով կարելի ըլլայ լրիւ հասնի ակնկալուած նպատակին: Ունէ վարժարանի մը աշակերտութիւնը առհասարակ կը կազմաւորուի ուսուցիչներով և օրինակով: Դպրոց ըստածը իր վերջին վերջութումն յատկապէս կը դրանք կազմական վարժարաններու համար: Հետևաբար՝ ոչ մէկ դժուարութեան և զոհողութեան առջև կանգ պէտք է առնել օժտելու համար նոր ժառանգաւորացը և Ընծայարանը կարողագոյն մտքի ոյժերով: Կ'ենթադրենք որ Առաքելական Աթոռը ներկայիս ի վիճակի չէ առանձինն ի գոյւի հանելու այս գործը. հետևաբար կը ծագի անհրաժեշտութիւնը ամենքիս համագործակցութեան. ու ասիկա իրաւունքը և արդար պահանջըն է Երուսաղէմի Աթոռին, քանի որ ժառանգաւորաց Վարժարանը միայն Սրբոց Յակոբեանց վանքին համար միաբաններ չէ որ կը հասցէ, այլ՝ ամրող Հայաստանեայց Եկեղեցին հոգևոր պաշտօնեաններ, ինչպէս կը հաստատէ Երկայ իրականութիւնը, երբ գրեթէ Սփիտքի ամրող տարածքին վրայ, մեր բոլոր թեմերուն մէջ՝ կը պաշտօնավարեն Երուսաղէմի ժառանգաւորաց Վարժարանէն շրջանաւարտ հոգևորականներ:

Մենք, Թուրքիոյ հայութիւնը, «Արծաթ և ոսկի ոչ ունիմք». բայց պիտի շարունակենք տալ ինչ որ ունինք. պիտի շարունակենք հայթայթել Երուսաղէմի Աթոռին համար կարևորագոյն հում նիւթը - աշակերտութիւնը: Շատ բնականօրէն Սայր Աթոռոր անպակաս պիտի ընէ իր բարոյական հովանաւորութիւնը և օժանդակութիւնը, ինչպէս ըրած է ցարդ: Սակայն, ըստ մեզի, կարևորագոյնը պիտի լիցի կազմութիւնը արտասահմանն բարձրագոյն մակարդակի կեղրոնական Յանձնախումքի մը, որ ստանձնէ այս սրբազն գործի նիւթական հոգին առաւելագոյն բաժինը, ինչպէս եղաւ արդարէն Ս. Տեղեաց նորոգութեան պարագային: Սակայն բացայալ է, թէ գլխաւոր գործը պիտի կատարուի այստեղ, Ս. Աթոռին մէջ, իր գործադիր ոյժ և իր կենսագործող ծեռք: Հոգևորականներ պատրաստելու

այսպէս ասած սոյն գործարանի վարիչները, գործիշները և արտադրիչները գըլիսաւրաբար Սրբոց Յակոբեանց միաբանները պիտի ըլլան: Մենք վստահ ենք որ Սրբոց Յակոբեանց միաբանութիւնը, առաջնորդութեամբ իր Ամեն. Պատրիարքին, և ամրող իր վարչական մեքենականութեամբ, ինքզինքը պիտի ենթարկէ սըրբազն պրկումի և օրինակելի կարգապահութեան, իրագործելու համար, առաւելագոյն չափով, այս վարժարանի գերագոյն նպատակը:

Մենք անգամ մը ևս կը խնդակցինք ու կը շնորհաւորենք Երուսաղեմի Ամեն. Պատրիարքը և Միաբանութիւնը, ձեռք ծգուած այս հոյակապ յաջողութեանց համար: Մենք անգամ մըն ալ կը յայտնենք մեր գործունակութիւնը մեջի եղած եղբայրական այս հրաւերին՝ ինչպէս նաև մեր անձին և մեր հետևորդներուն Ըկատամաբ ցոյց տրուած հիւրամեծարութեան համար: Ու Կ'աղօթենք, որ նուիրապետական մեր Աթոռներու այս ետեակ եղբայրական հանդիպումը վերածուի երջանիկ օր մը քառեակ հանդիպումի, ու այս անգամ իր ամբողջականութեանը և իր լրութեանը մէջ իրագործուի Հայաստանեայց Եկեղեցի միասնականութիւնը, ի փառս Աստուծոյ, ի պայծառութիւն մեր Եկեղեցիին և ի հոգևոր միսիթարութիւն մեր ժողովուրդին:

### ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳՈՎՀ

Ն. Վ.ՍԵՄ. Էֆրամ. ԳԱԹՑԻՐԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը պաշտօնական այցելութիւն մը տուաւ Հանրապետութեան Նախադահ Ն. Վահեմ. Էֆրամիմ Գաթցիրին՝ Նախադական պալատին մէջ, Երկուշարթի, 30 Յունիս 1975, ժամը 10-ին: Ն. Ս. Օծութեան կ'ընկերանային Երուսաղէմի և Կ. Պոլսոյ Ամեն. Պատրիարքները, Եկեղեցական բարձրաստիճան Հիւրերը և արտասահմանէն եկած Հիւրերը:

Սիրալիք ընդունելութեան ընթացքին Վեհափառ Հայրապետը ուղերձ մը կարդաց, որով գոհունակութիւն յայտնեց որ Ս. Քաղաք կը գտնուէր Երկրորդ այցելութեամբ, և կ'աղօթէր որ Ս. Երկիրն ու Միջին Արևելքը տիրանային Երկարատե խաղաղութեան:

Ապա, Վեհափառ Հայրապետը Ն. Վահեմ. Նախադահին նուիրեց Հայկական մարտարեայ խաչքարեր, ինչպէս նաև կիլիկոյ Հեթում և Լոռն թագաւորներու Երկու թանկապին դրամներ:

Ն. Վահեմ. Նախադահ Էֆրամիմ Գաթցիր սիրալիք արտայայտութիւններով պատասխանեց Վեհափառ Հայրապետի անկեղծ ուղերձին, և Ն. Ս. Օծութեան նուիրեց քսան դարու Հնութեամբ Հրէական կուէ թանկապին անօթմը:

Հիւրասիրութենէ և մտերմիկ տեսակցութենէ ետք, Վեհափառ Հայրապետը և չքախումբի անդամները հրաժեշտ առին Ն. Վահեմ. Նախադահին և վերագարձան մայրապանք:

### ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԱՐԱԲ ՀԱՄԱՑՆՔԻՆ ԿՈՂՄԻ

Երկուշարթի, 30 Յունիս 1975, կէսօրէ ետք ժամը 3-5, «Ամպասատոր» շքեղ պանդոկին մէջ ի պատիւ Վեհափառ Հայրապետին ընդունելութիւն մը տեղի ունեցաւ Ս. Երկրի Արար Համայնքին կողմէ, որուն ներկայ էին Հեղունի Քաղաքապետ Ն. Վահեմ. Շէյխ Ճա՞պարի, Երուսաղէմի Միւֆթին, Ռամալլայի Ն. Վահեմ. Քաղաքապետը, ինչպէս նաև Արար բարձրաստիճան անձնաւորութիւններ:

Ընդունելութիւնը անցաւ շատ ջերմ և անկեղծ միջնորդական մէջ, որուն ընթացքին երկուստեք եղան եղբայրական սիրոյ և բարեկամութեան արտայայտութիւններ :

### ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԴԱԼԻԹԻ ԲԵՐԴԻՆ ՄԵՋ

Կրօնից Նախարարութեան և Երուսաղէմի Քաղաքապետարանին կողմէ մասնաւոր ընդունելութիւն մը արուեցաւ ի պատիւ Ն. Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետին և Հիւր Հայ եկեղեցականութեան, Երկուշարթի, 30 Յունիս 1975, երեկոյեան ժամը 5.30-7.00, հնադարեան Դաւիթի Բերդին մէջ :

Ներկայ էին, բայցի Հայ Հիւրերէն և Հայ Համայնքի անդամներէն, պետական և դեռպանական մարմիններու ներկայացուցիչներ, ինչպէս նաև կրօնական բոլոր համայնքներու ներկայացուցիչներ : Ներկայ էին Կրօնից Նախարար Ն. Վահեմ. Իցհաք Ռաֆայէլ, Երուսաղէմի Նահանգային Կառավարիչ Ն. Վահեմ. Ռաֆայէլ Լեզի, Երուսաղէմի Քաղաքապետ Ն. Վահեմ. Թէտի Քոլէք, Հեղարոնի Քաղաքապետ Ն. Վահեմ. Շէյխ Ճա'ապարի, Խոլամ, Սամարացի և Տիւրզի Համայնքներու կրօնական ներկայացուցիչներ : Հրէական փողերախումբ մը կը նուազէր հայկական եղանակներ :

Ընդունելութեան ընթացքին խօսք առին Ն. Վահեմ. Կրօնից Նախարար և Վեհափառ Հայրապետը՝ որ չնորհակալութիւն յայտնեց իրեն հանդէպ ցոյց տրուած պետական և քաղաքային սիրավեպ վերաբերմունքին համար : Խոկ Ն. Վահեմ. Թէտի Քոլէք բառ որ անցնող օրերը հանդիսացած էին փառաւոր շարաթ մը, որ Երուսաղէմի պատմութեան մէջ պիտի յատկանչուէր իրքն «Հայկական Շարաթ» :

Հիւրասիրութենէն ետք, ընդունելութիւնը վերջ գտաւ ժամը 7-ին :

### ԱԱՇԿԵՐՈՅԹ ՊԱՏՐԻԱՐքԱՐԱՆԻ ԴԱՀԱՒՅՑԻՆ ՄԵՋ

Երկուշարթի երեկոյեան, ժամը 8-11, Երուսաղէմի վերջին գիշերը Վեհափառ Հայրապետին, Ս. Աթոռիս կողմէ Պատրիարքարանի գահիվճին մէջ շքեղ ճաշկերոյթ մը տրուեցաւ, որուն ներկայ էին, Հիւր Հայ եկեղեցական դասէն և աշխարհական այցելուներէն զատ, Երուսաղէմի Հայ գաղութի ներկայացուցիչներ :

Սեղմ շրջանակի մէջ կատարուած այս ճաշկերոյթը անցաւ բացառիկ յաջողութեամբ և խանգամառութեամբ :

Սակայն այդ խանգամառութիւնը հրձուախառն յուղումի վերածուեցաւ, երբ Ս. Աթոռիս Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հայրը խօսք առնելով յայտնեց թէ ազդիս Վեհափառ Հայրապետին թելաղքութեամբ և միջոցաւ, Հայաստանի Ս. Մեսրոպ Մաշտոցի Անուան Ձեռադրաց Մատենադարանին կը նուիրէր Հայ մանրանկարչութեան և գրչագրական արուեստի զլուխ զործոցներէն մինչ թորոս Առուլինի մանրանկարած Առետարանը, 13-րդ դարէն, արծաթապատ կողքով : Այս յայտարարութիւնը ընդունուեցաւ բուռն և երկարատես ծափահարութիւններով : Բոլոր ներկաները կը հրձուէին այն դիտակցութեամբ՝ թէ Հայ արուեստի այս անսուդիւտ զանձը կ'երթար հարստացնելու մայր Հայաստանի ճեռագրաց ճոխ հաւաքածոն :

Վեհափառ Հայրապետը, յուղուած, Պատրիարք Արքաղանձն ստացաւ Ռուսինի Առետարանը, Համբուրեց, և գետեղեց զայն Գահին վրայ, ըսելով : «Այդ Արքաղան Գիրքին կը վայելէ զահը» : Ն. Ամենապատուութիւնը Վեհափառ Հայրապետին նուիրեց նաև ճեռագիր թանկաղին Առետարան մը : Ապա,

Ն . Ս . Օծութիւնը խոր ապրում ով խօսեցաւ Հայ գալաւոր մշակոյթի , Հայ ժողովուրդի ստեղծագործ հանճարին ու կենսունակութեան մասին : Անդքա- զարձաւ Երուսաղէմի իր Երկրորդ այցելութեան , և Եղբակացուց իր սքանչելի խօսքը , ըսելով . «Կ'աղօթենք որ Աստուած մեզի չնորհէ կեանք , որպէսզի ան- զամ մը ևս ուխտի զանք Ս . Երուսաղէմ և Ս . Յակոբեանց այս սքանչելի հաս- տատութեան» :

Ներկաներու բուռն փափաքին վրայ , ազդիս Վեհափառ Հայրապետը հաւանեցաւ , Հակառակ իր յողնութեան , քիչ մը ևս պատուել բոլորը իր ներկա- յութեամբ :

Այս իրապէս խանդավառ և գեղեցիկ հաւաքոյթը վերջ դաւաւ գիշեր- ուան ժամը 11-ին :



Ս . Արքուխ Պատրիարքարանի Դահլիճին մէջ , Ն . Ամեն . Տ . Եղիշէ Ս . Արքեպաս . Տէրտէրեան կը յայտարարէ Ն . Ս . Օծութեան միջոցաւ Ռու- լինի ձեռագիր Աւետարանին նուիրումը՝ Երկանի Մեսրոպ Մաշտոցի Անուան Զեռագրաց Մատենադարանին :

#### ՎԵՃԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՄԵԿՆՈՒՄԸ Ս . ՔԱՂԱՔԻՆ

Երեքշարթի , 1 Յուլիս 1975 , առաւտուեան ժամը 9-ին զարձեալ կը զօ- ղանջէ մայրավանքի մեծ զանգը և հաւատացեալներու բարձութիւնը կը լեցնէ Ս . Յակոբեանց Տաճարն ու զափթը : Ժառանդաւորաց Վարժարանի և Ծնծա- յարանի սաները , Տատուրեան սաներն ու Ս . Թարգմանչաց Երկրդ . Վարժա- րանի ուսանողութիւնը կը շարուին զէպի Պատրիարքարան առաջնորդող առ- տիճաններուն Երկայնքին , Երբ , թափօրով և շարականներու երգեցողութեամբ Վեհափառ Հայրապետը վար կ'իջնէ և մուտք գործելով Տաճար , իր ուխտն ու աղօթքը կը կատարէ : Ասա , դուքս զալով ծափահարութիւններու ընդմէջնէն և «Սիոնի որդիք զարթիք» շարականի Երգեցողութեամբ կը յառաջանայ Վանքի աւագ դուռ , ուր ինքնաշարժները կը սպասեն :

Աւագ դրան մէջ յուզիչ ողջագուրում մը տեղի կ'ունենայ, բոլորը կը մօտենան Ն. Ս. Օծութեան Ա. Աջը անգամ մը ևս համբուրելու և ստանալու աղդիս Վեհափառ Հայրապետին օրհնութիւնները:

Ա՛լ հասած է պահը հրաժեշտի:

Վեհափառ Հայրապետը վերջին անգամ կ'օրհնէ Հաւաքուած միաբան Հայրենին ու Հաւատացեալները, ապա, իր շքախումբի անդամներով և Ն. Ամեն. Պատրիարք Ա. Հօր ու Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոսի ուղեկցութեամբ կ'ուղերուի դէպի Ամման:

### ՄԵԿՆՈՒՄ ԹՈՒՐՔԻՈՑ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Զորեքարթի, 2 Յուլիս 1975, առաւօտեան ժամը 10-ին դարձեալ կը դողանջէ մայրավանքի զանգը, և Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ն. Ամեն. Տ. Շնորհչք Արքեպս. Գալուստեան իր հետեռդներով մուտք կը դորձէ Ս. Յակոբեանց Տաճար, իր ուստը վերանորոգելու և հրաժեշտի խօսքը ըսելու Հաւաքուած Հաւատացեալներուն:

Ապա, շարականի երգեցողութեամբ և թափօրով, Ն. Ամենապատութիւնը կ'ուղղուի դէպի Մայրավանքի աւագ դուռը, և ծափահարութիւններու ընդմէջն կը նստի ինքնաշարժ, Պէն կուրիօն օղակայանէն մեկնելու իր Աթոռը, Պոլիս:

Ն. Ամեն. Տ. Շնորհչք Պատրիարք յուզումով և նորոգուած յիշատակներով կը բաժնուի Երուսաղէմէն, ականատես ըլլալէ ևտք վերջին տասնհինգամեակին Ս. Աթոռիս Գահակալ Ն. Ամեն. Տ. Եղիշէ Ա. Պատրիարք Հօր ջանքերով կատարուած շինարարութիւններու արդիւնքին և դարաւոր այս Հաստատութեան կենսունակութեան ու բարօր կեանքին:

Տ. Շնորհչք Պատրիարքին հետ մեկնեցան նաև Պոլիսէն հիւրաբար Երուսաղէմ գտնուող մեր Հայրենակիցները:

### ՎԵՀԱՓԱԾ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՄՄԱՆԻ ՄԷՋ

Վեհափառ Հայրապետը երբ անցաւ Ալէնպի կամուրջէն, իրեն կը ըսպասէր Յորդանանի Վեհափառ Թագաւորին կողմէ տրամադրուած շքեղ ինքնաշարժ մը, զոր նստելով և ոստիկանական ջոկատի ինքնաշարժներու ուղեկցութեամբ իր ճամբան շարունակեց դէպի Ամման:

Ն. Ս. Օծութիւնը հասնելով Ամման, ուղղուեցաւ սպանդոկ, հանդստանալու:

### ՎԵՀԱՓԱԾ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՅՈՐԴԱՆԱՆԻ ԾԵՐԱԿՈՅՑԻ

#### ՆԱԽԱԳԱՀԻՆ ՄՈՏ

Զորեքարթի, 2 Յուլիս 1975, առաւօտեան ժամը 10-ին, Ն. Ս. Օծութիւնը իր շքախումբով այցելեց Յորդանանի Մերակոյտի Նախադահ. Վահագանի թալհունիին, Մերակոյտի շէնքին մէջ:

Մերակոյր ընդունելութենէ և մտերմիկ տեսակցութենէ մը ևտք, Ն. Վ. սեմութիւնը Վեհափառ Հայրապետին նուիրեց Ս. Մննդեան սատափեայ դեղեցիկ նկար մը:

### ՎԵՀԱՓԱԾ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՅՈՐԴԱՆԱՆԻ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱԾՈՒԹԻՒՆԻ

#### ՀԻՒՄԵՑՆ Ա. ԹԱԳԱՆՈՐԻՆ ՄՈՏ

Մերակոյտի Ն. Վ. սեմ. Նախադահէն բաժնուելով, Ն. Ս. Օծութիւնը

իր շքախումբով դիմեց դէպի Հաշիմական Պալատ, ուր պատիւներու արժանանալէ ետք ընդունուեցաւ Յորդանանի Ն. Վեհափառութիւն Հիւսէյն Ա. Թաղաւորին կողմէ : Ներկայ էր նաև Գահաժառանդ Ն. Վամի Հասան Իջևան :

Ն. Ա. Օծութիւնը շատ սիրալիք տեսակցութիւն մը ունեցաւ Հաշիմական Տան Վեհափառ Պետին հետ, որուն պարզեց Ա. Դրիգոր Լուսաւորիչի Առաջին Կարգի ականակուր շքանշանը :

Աղջիս Հայրապետը նորհակալութիւն յայտնեց Հայրական այն խընամքին և հոգածութեան համար զոր Ն. Վեհափառութիւն Հիւսէյն Թաղաւորը և Յորդանանեան Կառավարութիւնը կը տաճեն Յորդանահահայ գաղութիւն Հանդէպ :

Խաղաղութեան և Ն. Վեհափառութեան արևշատութեան մաղթանքներով Ն. Ա. Օծութիւնը իր շքախումբով հրաժեշտ առաւ և մեկնեցաւ Պալատէն :

Կէսօրին, Վեհափառ Հայրապետը ճաշի հիւրը եղաւ Ամմանի Հայ գաղութիւն :

### ՃԱՇԿԵՐՈՅԹ Ի ՊԱՏԻՒ Ն. Ա. ՕԾՈՒԹԵԱՆ

Երեկոյեան, յանուն Յորդանանի Վեհափառ Թաղաւորին և Կառավարութեան, Արօրթինկ Գլազի մէջ ի պատիւ Ն. Ա. Օծութեան և իր շքախումբին Կրօնից Նախարարութեան կողմէ չքեզ ճաշկերոյթ մը արուեցաւ :

Ներկայ էին Կրօնից Նախարար Ն. Վ. Շէյխ Խայաթ, Խոլամական Կրօնական Աստեանի Նախագահ Շէյխ Ապտալլա Ղօչէ, Խոլամական Կրօնական դասը, Յորդանանի Լատին Գերշ, Եպիսկոպոսը, Յորդանանի Յունաց Առաջնորդը, Ամմանի Հայոց Հոգենոր Հովիւ Հողէ. Տ. Անուշաւան Վրդ. Զդիան եան, տեղական Հայ վարչութեան անդամները և այլ հիւրեր :

Ճաշկերոյթի ընթացքին երկուստեք եղան ջերմ սիրոյ և եղբայրութեան արտայայտութիւններ :

### ՄԵԿՆՈՒՄ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՄՈՒԹԻՒԹԻՒՆ ՎԵՀԱՓԱՄ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հինգչարթի, ՅՈՒՂԻՄ 1975, Կէսօրին, Վեհափառ Հայրապետը իր շքախումբով ժամանեց Ամմանի օդակայտն, և հանդստացաւ Վեհափառ Թաղաւորին յատուկ սրահին մէջ: Օդակայտն Ն. Ա. Օծութեան ողջերթ մաղթելու եկած էին Արտաքին Գործոց Նախարարութեան Ընդհանուր Տնօրինը, Բրոթօքովի պետը, Սովետական դեսպանատան կազմը, Ամմանի բոլոր կրօնապետները և Հայ զաղութիւն ներկայացուցիչները:

Ժամը 12-ին Ն. Վեհափառութիւնը ուղղուեցաւ դէպի օդանաւ, ուր իրեն ընծայուեցան ծաղկեփունջներ: Ն. Ա. Օծութիւնը ողջագուրուեցաւ Ս. Աթոռիս Ամեն. Պատրիարք Ս. Հօր և ներկաներուն հետ, օրհնեց բոլորը և ապարագրացաւ օդանաւ իր շքախումբի անդամներուն հետ:

Դանդաղօրէն Հակայ օդանաւը սկսաւ յառաջանալ և քանի մը վայրկեան ետք արդէն թուիչք առած էր, խաղաղութեամբ և ապահով իր հետ տանելով ազգիս Հայրապետը՝ Ն. Ա. Օծութիւն Տ. Տ. Վաղգէն Առաջին Վեհափառ Կաթողիկոսը:



## Ն. ՎԱԵՄՈՒԹԻՒՆ ՏԻԱՐ ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԲԱՐԵՐԱՐԸ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ

Երկար տատանումներէ և երկմտութենէ եսք միայն որոշեցինք պատրաստել ցանկը Վսեմ. Տիար Ալեքս Մանուկեանի մօտ տասը տարիներու ընթացքին կատարած նույրատութիւններուն, և հրատարակել զայն «Սիրն»ի մէջ: Կը տատանէինք, որովհետև տեղեակ էինք Վսեմ. Բարերարին համեստութեան, և գիտէինք որ իր իսկ փափաքին դէմ պիտի ըլլար նման հրատարակութիւն մը:

Սակայն մեր միակ մտահոգութիւնն էր հանրութեան ծանօթացնել Վսեմ. Տիար Մանուկեանի գործը, այդ գործին Եկարագիրը, որ կը յատկանշուի մէկ բառով. կրթական: Այստեղ հրատարակուող ցանկին վրայ արագ ակնարկ մը, ընթերցողին Եկատել պիտի տայ որ Բարերարին նույրատութիւնները յատկացուած են, մեծագոյն տոկոսով, դպրոցաշինութեան և երիտասարդներու դաստիարակութեան: Դպրոցաշինութեան՝ Հայ ոգին անաղարտ և միշտ արծարծ պահելոյ նորահաս սերունդներուն մէջ. դաստիարակութեան՝ Հայ երիտասարդներէն ունենալու պատրաստուած, առողջ, խորապէս Հայ և միաժամանակ գիտակից քաղաքացիներ:

Հայ սփիտքի գրեթէ բոլոր կարևոր կեդրոններուն մէջ այսօր կը բարձրանան վարժարաններ և մշակոյթի կեդրոններ, որոնք հպարտութեամբ կը կրեն Տիար Մանուկեանի անունը, յաճախ միացած իր Ազն. Տիկնոց անուան: Իր կողմէ հաստատուած «Ալեքս Մանուկեան մշակութային հիմնադրամ»ը՝ իր տարողութեան մէջ Եզակի, ամէնէն աւելի կազմակերպուած, սքանչելի և անժամանցելի ծրագիրներ պարզող ծեռնարկ մըն է, ամրող Հայութեան ծառայութեան կոչուած:

Այո՛, կը հիանանք այն առատաձեռնութեան վրայ որ Տիար Մանուկեանը կը յատկանշէ: Սակայն կը մեծարենք Բարերարը, որովհետև թերևս միակն է ան որ իր բարերարութիւններուն համար յստակ ծրագիր մը մշակած է զոր կ'իրագործէ մեթոսիկ կերպով, անշեղ և հաւատաւոր:

Իրեն համար երկու են կարևորագոյն գոյութիւնները.- Հայ դպողը և Հայ երիտասարդութիւնը: Եւ, դարձեալ իրեն համար, մէկ է գերագոյն սրբութիւնը՝ Հայ Եկեղեցին, որուն բացուած է իր հոգին այնքան անկեղծութեամբ և նույրումով:

Տանկը զոր կը ներկայացնենք ստորև, անկատար է, որովհետև բազմաթիւ են այն բարերարութիւնները որոնք յաճախ յայտարարուած իսկ չեն, և հետեւաբար պաշտօնական հրատարակութիւններու մէջ չեն երևած: Մեր ցանկը պատրաստելու միջոցին օգտուած ենք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պաշտօնաթերթ «Յուշարար-Միութիւն»ն:

ԽՄԲ.

1963

Տ ո լ ա ր

— Հ. Բ. Ը. Միութեան, կրթական, մշակութային և խնամատարական նպատակներու համար	12,000
--	--------

1964

— Հ. Բ. Ը. Միութեան, կրթական, մշակութային և խնամատարական նպատակներու համար	30,000
--	--------

1965

— Հ. Բ. Ը. Միութեան, կրթական, մշակութային և խնամատարական նպատակներու համար	80,000
— Ի նպաստ Հ. Բ. Ը. Միութեան Եպոպայի Շրջանակի	5,000
— Ի նպաստ Հ. Բ. Ը. Միութեան Պուէնոս Այրեսի (Արժենթին) Մարի Մանուկեան Երկրորդ վարժարանի շինութեան	15,000
— Ի նպաստ Հ. Բ. Ը. Միութեան Հալեպի Հ. Ե. Ը.-ի շենքի ֆոնտին (5,000 Լիր. Ոսկի)	1,500

1967

— Հ. Բ. Ը. Միութեան, շինարարական նպատակներու համար	100,000
--	---------

1968

— Հ. Բ. Ը. Միութեան Ալեքս Մանուկեան Մշակութային Հիմնադրամ	1,000,000
— Ի նպաստ Նիւ Եռքի Ս. Կարդան Տաճարի շինութեան	245,000
— Ի նպաստ Տիգրոյի Ս. Ցովհաննես Տաճարի շինութեան	220,000
— Հ. Բ. Ը. Միութեան, շինարարական նպատակներու Գալիֆորնիոյ Լոս Անձելըսի Համալսարանի Հայկական Ամպիոնին գրադարանի մը գնման համար	265,000
— Ամպիոնին գրադարանի մը գնման համար	25,000

1969

— Ի նպաստ Հ. Բ. Ը. Միութեան Դպրոցաշինութեան արշակին	500,000
— Հ. Բ. Ը. Միութեան շինարարական նպատակներու	260,000

1970

— Ի նպաստ Հ. Բ. Ը. Միութեան Պէյրութի Ալեքս Մանուկեան Մարզական և Մշակութային Կեդրոնի շինութեան	225,000
— Հ. Բ. Ը. Միութեան շինարարական նպատակներու	90,000

1971

— Ի նպաստ Տիեզրոյթի Հայ Ծերանցի շինութեան	700,000
— Հ. Բ. Ը Միութեան Պէյրովի Հ. Ե. Ը.-ին (100,000 Լիր. Ոսկի)	30,000
— Հ. Բ. Ը Միութեան Տիեզրոյթի Ալեքս Մանուկեան Վար- ժարանին	500,000

1971 - 1975

— Երուսաղեմի Ակեզս և Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարանի նոր շենքին 800,000

1972

— Հ. Բ. Ը Միութեան Լոս Ա Ա ճ ե լ ը ս ի Կ ե ղ ր ո ն ի և Ե ր ի տ ա- ս ա ր դ ա կ ա ն հ ա ւ ա ք ա տ ե լ ի ի շ ի ն ու թ ե ա ն	300,000
— Յ ա ւ ե ր ս Ա լ ե ր ս Մ ա ն ո ւ կ ե ա ն Մ շ ա կ ո ւ թ ա յ ի ն Հ ի մ ն ա դ ր ա- մ ի ն վ ր ա յ	865,500

1973

— Հ. Բ. Ը. Միութեան Տիթրոյթի Ալեքս Մանուկեան Վարժարանի ընդարձակման համար	560,000
— Ի նպաստ Հ. Բ. Ը. Միութեան Թորոնեոյի Մշակութային Կեդրոնին	400,000
— Հ. Բ. Ը. Միութեան Միացեալ Նահանգներու Կեդր. Յանձնաժողովին	40,000
— Ի նպաստ Հ. Բ. Ը. Միութեան Տիթրոյթի Ալեքս Մանուկեան Վարժարանին	40,000

1974

— Միացեալ Նահանգներու հայկական զանազան վարժա- րաններուն	20,000
— Ի նպաստ «Հայաստան և Զուլիցերիա» հատորի տպագ- րութեան (10,000 Զուլից. ֆրանք)	3,000
— Ի նպաստ Հ. Բ. Ը Սիովթեան Փարիզի Ալեքս Մանուկ- եան Մշակութային Կեդրոնի շենքին (100,000,000 ֆրանս. հին ֆրանք)	250,000

- 1969 - 1975

— Տարեկան 3,000 Տոլարի յատկացում Գալիֆորնիայ Լու  
Անձեւսի Համալսարանի Հայկական Ամպիոնին 21,000

ԸՆԴՀ. գումար՝ 7,603,000

## ՄԵՐ ՀԻՒՐԵՐԸ

Ն. Ա. ՕԺՈՒՅԹԻՆ Տ. Տ. Վաղգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Երուսաղէմ այցելութեան և Ա. Յարութեան Տաճարի Հայկական վերանորոգուած խորաններու օծման ու Ալեքս և Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարանի նորակառոյց շէնքի պաշտօնական բացումի եռապատիկ առիթներով, Երուսաղէմ ժամանեցին և Ա. Աթոռիս հիւրը եղան հետեւալները.

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ

Ն. Ամեն. Տ. Շնորհ Արքեպոս. Գալուստեան, Պատրիարք Թուրքիոյ Հայոց Գերշ. Տ. Սերոբ Արքեպոս. Մանուկեան, Հայրապետական Պատուիրակ Արքմանեան Երոպայի և Առաջնորդ Ֆրանսայի Հայոց, Փարիզ, Ֆրանսա Գերշ. Տ. Կոմիտաս Արքեպոս. Տէր Ստեփանեան, Առաջնորդ Արքարատեան Թեմի, Երևան, Հայաստան  
 Գերշ. Տ. Թորգոն Արքեպոս. Մանուկեան, Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Արևելեան Թեմի, Նիւ Եորք, Միացեալ Նահանգներ  
 Գերշ. Տ. Վաչէ Եպոս. Ցովսէփեան, Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Արևելեան Թեմի, Լու Աթենելըս, Միացեալ Նահանգներ  
 Գերշ. Տ. Սիոն Արքեպոս. Մանուկեան, Տիրոյք, Միացեալ Նահանգներ  
 Գերշ. Տ. Պատկ Արքեպոս. Թումայեան, Լուսոն, Անգլիա  
 Գերշ. Տ. Տիրայր Եպոս. Մարտիկեան, Առաջնորդ Թումանիոյ և Պուլկարիոյ Հայոց  
 Գերշ. Տ. Գիւտ Եպոս. Նազգաշեան, Փարիզ, Ֆրանսա  
 Հոգշ. Տ. Փառէն Վրդ. Աւետիքեան, Տիրոյք, Միացեալ Նահանգներ  
 Հոգշ. Տ. Անանիա Արդ. Արքարաքեան, գաւազանակիր Վեհապատ Հայրապետին  
 Արժ. Տ. Տիրան Քինյ. Փափակեան, Օհայօ, Միացեալ Նահանգներ  
 Արժ. Տ. Շահէ Քինյ. Ալբումեան, Ֆրեզնօ, Միացեալ Նահանգներ  
 Արժ. Տ. Յարութիւն Քինյ. Հալլանեան, գաւազանակիր Ն. Ամեն. Տ. Շնորհ Պատրիարքի, Պոլիս, Թուրքիա  
 Արժ. Տ. Կիրակոս Քինյ. Թոնքարլեան, Տիգրանակերտ, Թուրքիա

### ԱՇԽԱՐՀԱԿԱՆՆԵՐ

Վասիլ. Տէր և Տէն. Ալեքս Մանուկեան, Տիրոյք, Միացեալ Նահանգներ Տիար Տատուր Տատուրեան, Նիւ Եորք, Միացեալ Նահանգներ  
 Տէր և Տէն. Յարութիւն Թաղոսեան, Նիւ Եորք, Միացեալ Նահանգներ  
 Տէր և Տէն. Մրիւկ Մուկար, Պուրոն, Միացեալ Նահանգներ  
 Տէր և Տէն. Ռաֆֆի Տապանօֆ, Միացեալ Նահանգներ

Տէր և Տէն. Փրօֆ. Վազգէն Բարսեղեան, Նիւ Եորք, Միացեալ Նահանգներ  
Տէր. Վարդգէս Մկրտիչեան, Նիւ Եորք, Միացեալ Նահանգներ  
Տէն. Ֆլորա Սարգիսեան, Նիւ Եորք, Միացեալ Նահանգներ  
Փրօֆ. Աւետիս Սահմեան, Լու Աննելըս, Միացեալ Նահանգներ  
Տիար Գրիգոր Խանճեան, Երևան, Հայաստան  
Տիար Արքուն Հատիսեան, Երևան, Հայաստան  
Տէր և Տէն. Հայկ Տէր Մանուկյան, Պոսրոն, Միացեալ Նահանգներ  
Տէն. Էնն Հիմուլեան, Պոսրոն, Միացեալ Նահանգներ  
Տէն. Վիրթիմիա Մելքոնեան, Տիրոռյը, Միացեալ Նահանգներ  
Տիար Էտուբրտ Պողոսեան, Նիւ Եորք, Միացեալ Նահանգներ  
Փրօֆ. Տենիս Փափազեան, Տիրոռյը, Միացեալ Նահանգներ  
Տէր և Տէն. Գէորգ Պազրբեան, Փարիզ, Ֆրանս  
Տէր և Տէն. Արծրունի Զրբաշեան, Մարսիլիա, Ֆրանս  
Տէր և Տիկ. Միշել Ճերանեան, Նիս, Ֆրանս  
Տէր և Տէն. Սարգիս Պետոյեան, Փարիզ, Ֆրանս  
Տէն. Արշալոյս Մուրաֆելեան, Մարսիլիա, Ֆրանս  
Տէն. Վիքրորիա Երամեան, Մարսիլիա, Ֆրանս  
Տէն. Պայծառ Բարուքեան, Մարսիլիա, Ֆրանս  
Տէն. Օլլա Թիւֆէնքնեան, Մարսիլիա, Ֆրանս  
Օրդ. Լուսի Կարապետեան, Մարսիլիա, Ֆրանս  
Տէր և Տէն. Գործունեաններ, Փարիզ, Ֆրանս  
Տիար Ժիրայր Առաքելեան, Մարսիլիա, Ֆրանս  
Տէր և Տէն. Հարելեաններ, Պոլիս, Թուրքիա  
Տէր և Տէն. Մ. Աղաւենեան, Պոլիս, Թուրքիա  
Տիար Պերճ Շիկահեր, Պոլիս, Թուրքիա  
Տիար Ռոպեր Հատուկնեան, Պոլիս, Թուրքիա  
Տիար Պերճ Քաջ, Պոլիս, Թուրքիա  
Տիար Արա Մանկասարեան, Պոլիս, Թուրքիա  
Տիար Արամ Եսայեան, Պոլիս, Թուրքիա  
Տէն. Արախոի Կիւզելեան, Պոլիս, Թուրքիա  
Տէր և Տէն. Տիրան Ռոկերիչեան, Ամման, Յորդանան  
Տէր և Տէն. Սարգիս Լէփէնեան, Ամման, Յորդանան  
Տիար Բիւզանդ Չորպանեան, Ամման, Յորդանան  
Տիար Գէորգ Տաքէսեան, Ամման, Յորդանան  
Տէր և Տէն. Ժիրայր Զգրգնեան, Ամման, Յորդանան  
Տիար Յարութիւն Յարութիւննեան, Ամման, Յորդանան  
Տիար Ճիվան Նազգաշեան, Ամման, Յորդանան  
Տէր և Տէն. Յակոբ Մխնեան, Ամման, Յորդանան  
Տէն. Ալիս Փանոսեան և գաւակ, Ամման, Յորդանան  
Տէն. Արախոի Վիզոյեան և գաւակներ, Ամման, Յորդանան  
Տիար Արամ Թալարինեան, Ամման, Յորդանան  
Տէր և Տէն. Սեպուհ Երկարեան, Ամման, Յորդանան  
Տէր և Տէն. Հրանդ Ս. Նազգաշեան, Ամման, Յորդանան  
Տիար Արտաշէս Ասատուրեան, Ամման, Յորդանան  
Տէր և Տէն. Արշակ Դաւիթեան, Ամման, Յորդանան



ԱՄԲԵԿԱՆ ԴԱԾՍԱՀԱՆԴԻՍ Ս. Թ. ՎԱՐԺԱՐԱՆԻ




Կիրակի, 11 Մայիս, երեկոյեան ժամը 4ին, Ժառանգաւորաց Վարժարանի մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ տարեկան դաշտահանդէսը Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանին, ի ներկայութեան ծնողներու և ժողովուրդի կողիկ բազմութեան:

Ծուրջ երկու ժամերու ընթացքին, Վարժարանին երկսեռ աշակերտութիւնը, երկուական մրցորդ խումբերու բաժնուած, ցուցաբերեց տարուան մը մարզական ճիգերուն արդիսնըք: Վարժարանի նոր մարզիչ Պր. Յակոպ Մէնչեան յաջողած էր ուրիշ տարիներու յայտագրին վրայ կանոնաւորաբար տեղ բռնող խաղերէն բացի, հետաքրքրական մէկ-երկու խաղեր ևս ատեցնել, որոնք կատարուեցան մարզիկներուն կողմէ անթերի յաջողութեամբ, և որոնք խլեցին բուռն ծափեր հանդիսականներէն:

Յայտագրի աւարտին, մրցանակարաշխութիւնը կատարեց Տեսուչ Հոգէ. Տ. Կիրեկ Շ. Վրդ. Գարիկիան, պարզմատրելով յաջող մարզիկներու բաժակներով ու մէտաղներով:

Ներկաները գոհունակութեամբ բաժնուեցան խաղավայրէն, ի տես ինացական կրթանքին բոված ի վեր Վարժարանին ընծայած կարևորութեան նաև մարմնակրթանքի մարզէն ներս:





\* Կիր. 1 Յունիս.— Տօն Երեման Ս. Խաչին (351): Ս. Պատարագը մատուցուցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ, որուն վերնը կը ճշմարուէր վառ կանթեղներով զարդարուն Ս. Խաչին ճշանը: Ժամարարն էր Հոգ. Տ. Աղան Վրդ. Պալիօգեան:

\* Ծր. 7 Յունիս.— Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Հրեշտակապետ: Ժամարարն էր Հոգ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

\* Կիր. 8 Յունիս.— Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ և կեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

\* Դշ. 11 Յունիս.— Վաղուան Համբարձման տօնին առիթով, կէսօրէ ետք, Հոգ. Տ. Հայկանը Վրդ. Պայտանին զլխաւորութեամբ, Միարան Հայրեն ինքնաշարժներով բարձրացան Զիթենեաց լեռ, որ Համբարձման սրբավայրին վրայ կառուցուած մեր վրանամատուիին մէջ պաշտուցան երեկոյեան ժամերգութիւնը և հախատօնակը:

— Իրիկնայիմին, նոյն Վայրին մէջ պաշտուցան «Եկեսցէ»ի և Հսկման կարգեր, և ապս՝ գիշերային և առաւտեան ժամներգութիւններ: Հանդիսապետըն էր Հոգ. Տ. Հայկանը Վարդապետ: Արարողութիւնները աւարտուցաւ գիշերուան ժամը 10.30-ին:

\* Եշ. 12 Յունիս.— ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՏԵԱՌՈՒՄ ՄԵՐՈՅՑ: Առաւոտուն, Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմիանի զլխաւորութեամբ, Միարան Հայրեն ինքնաշարժներով բարձրացան Զիթենեաց լեռ, որ «Հրաշափառ»ի հանդիսաւոր մուտքէն ետք Համբարձման սրբատեղիին վրայ կառուցուած մեր վրանամատուիին մէջ օրուան հանդիսաւը Ս. Պատարագը մատոյց և Համբարձման խորհուրդին շորոց բարողէց Գերշ. Հանդիսապետ Սրբազնը: Կատարուցաւ «Հայրապետական Մաղթանք»՝ Մայր Աթոռոյ Սիսէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձին առթի: Ս. Պատարագէն ետք Գերշ. Սրբազնը հախագանց սրբավայրին առջև կատարուած «Անդաստան»ին:

— Կէսօրէ ետք և Մայր Տաճարին մէջ «Անդաստան» կատարուցաւ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Արքեպս. Պողարեան:

\* Ծր. 14 Յունիս.— Ս. Պատարագը մատուցուցաւ Մայրավանքի Ս. Համբարձում վերնամատուիին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Հայկանը Վրդ. Պալրամեան:

— Բ. Ծաղկազարդի նախատոնակը պաշտուեցաւ Ա. Հրեշտակապետաց եկեղեցին մէջ: Հանդիսավետն էր Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան:

\* Կիր. 15 Յունիս.— Երկրորդ Ծաղկազարդ: Առաօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Հրեշտակապետ: Ժամարաբն էր Հոգչ. Տ. Գերոգ Վրդ. Նազարեան:

\* Ուր. 20 Յունիս.— Նկատելով որ ազգին Վեհափառ Հայրապետը Ա. Քաղաք պիտի ժամանէ Հոգեգալւատեան տօնին, այսօր, կ. ա. ժամը 11-ին, Հոգչ. Տ. Կիրիլ Ծ. Վրդ. Գարիկեանի գլխաւորութեամբ տեղի ունեցաւ Սիոնի վերանայունի տարեկան իրաւունքի մեր արարողութիւնը:

\* Ծր. 21 Յունիս.— Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայրավանքի Ա. Առաքելոց վերանայատուին մէջ: Ժամարաբն էր Հոգչ. Տ. Ական Վրդ. Ղարիպեան:

— Հոգեգալւատեան հանդիսաւոր նախատոնակը պաշտուեցաւ Ա. Յակոբ, Անհագահութեամբ Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Շնորհիք Արքեպս. Գալուստեանի:

— Գիշերակիզբին, Ամեն. Տ. Շնորհիք Պատրիարքը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեսցէ»ի և Հակման կարգերուն:

\* Կիր. 22 Յունիս.— ՀՈԳԵԳԱԼՈՒՍ: (Բարեկենդան Եղիական պահոց): Օրուան հանդիսաւոր Ա. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սիեղանին վրայ մատուց Ամեն. Տ. Շնորհիք Պատրիարքը և Յովիանու Ռոկերերանի Հոգեգալւատեան ներքոյի լնթերցումէն եւրք քարոզեց օրուան տօնին խորհուրդին շորջ: Յայտնեց թէ Ա. Հոգին ստացած են ո՞չ միայն առաքեալները՝ Սիոնի վերանայունին մէջ, այլև իրաքանչիւր քրիստոնեայ, իր մկրտութեան պահէն սկսեալ: Անհիկա հունտ մըն է, սերմ մը, ինկած մեր հոգեւաշտին մէջ:

\* Ծր. 28 Յունիս.— Է. օր Հոգեգալւատեան: Այսօրուան Ա. Պատարագը, որ սովորաբ կը մատուցուէր Մայրավանքի տաճիքին արևելակողմը գտնուող Ա. Հոգիի մատուին մէջ, մատուցուեցաւ Մայր Տաճարին մէջ, որ Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան կատարեց սարկաւագական ձեռնադրութիւնը Ա. Արքուոյ Հնձայարանի ուսանողներէն Ուրարակիր Տիրացուներ Սիրո Գայէստերեանի, Յակոբ Տուրտունեանի և Ամերիկահայ ուսանող Պարոյ Մելրոնեանի: Ձեռնադրիչ Սրբազնը խօսեցաւ խրատական քարոզ մը, ընծայեալներուն լորդուրելով Աստուծոյ և ազգին ծառայել իրենց բովանդակ կարողութեամբ: Ապա Ա. Պատարագ մատուցուեցաւ Ա. Գլխադրի մատուին մէջ: Ժամարաբն էր Ամերիկայէն ժամանած Ա. Ուխտիս Միարան Հոգչ. Տ. Փառէն Վրդ. Աւետիքեան:

\* Կիր. 29 Յունիս.— Յիշատակ Եղիայի Մարգարէին: Ն. Ա. Օծութին Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետը մատուց հանդիսաւոր Ա. Պատարագ Քրիստոսի Ա. Գերեզմանին վրայ, քարոզեց և նախագահեց մեծահանդէս թափօրիին:

\* Բշ. 30 Յունիս.— Ա. Կոսանացն Հոհիսիմեանց: Առաօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ Ա. Հրեշտակապետ, իսկ Ա. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցիի աւանդատունին՝ Ա. Հոհիսիմէի մատուին մէջ: Ժամարաբն էր Հոգչ. Տ. Գեղարդ Արդ. Տառուղարեան:

\* Ուր. 4 Յուլիս.— Նախատոնակին Ա. Յակոբի մէջ նախագահեց Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան:

\* Ծր. 5 Յուլիս.— Ա. Հօրն մերոյ Գրիգորի Լուսարշին: (Յիշատակ Եղանակոյն ի Վիրապէն): Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատունին՝ Ա. Լուսարիչի սեղանին վրայ: Ժամարաբն էր Հոգչ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

— Նախատօնակին Ա. Յակորի մէջ նախագահեց Գերշ. Տ. Շահէ Արքէպս. Աճէմեան: Արարողութեան աւարտին ծնրադիր երգուեցաւ «Տէր ողորմեա»:

\* Կիր. 6 Յուլիս.— Տօն Կաթողիկէ Եկեղեցւոյ Ա. Էջմիածնի: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Հոգ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան: «Հայր մեր»էն առաջ, Գերշ. Տ. Շահէ Արքափակուպոսի գլխաւորութեամբ, կատարուեցաւ «Հայրապետական մադժանք վասն Ա. Էջմիածնի»:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ «Անդաստան» կատարուեցաւ: Համապետն էր Գերշ. Տ. Նորայր Արքէպս. Պողարեան:

\* Ծր. 12 Յուլիս.— Ա. Մեծին Ներսիսի և Խաղայ Եպիսկոպոսին: Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Աւան Վրդ. Ղարիպեան:

\* Կիր. 13 Յուլիս.— Բարեկենդան Ա. Լուսաւորչի պահոց: Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յարութեան Տաճարի մեր վերնամատուին մէջ (առաջին անգամ ըլլալով նորոգութեան և օծումէն ետք): Ժամարարն էր Հոգ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտլարեան:

\* Ուր. 18 Յուլիս.— Նախատօնակին Ա. Յակորի մէջ նախագահեց Հոգ. Տ. Կիրեն Ծ. Վրդ. Գարիկեան:

\* Ծր. 19 Յուլիս.— Գիտ Աշխարաց Ա. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա. Մակարայ մատուին մէջ, որը թաղուած է, ըստ աւանդութեան, մատունքը Ա. Լուսաւորչի: Ժամարարն էր Հոգ. Տ. Հայկակը Վրդ. Պայրամեան:

\* Կիր. 20 Յուլիս.— Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յարութիւն, մեր վերնամատուին մատուին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

\* Դշ. 23 Յուլիս.— Թարգմանչաց հանդիսաւոր նախատօնակին Ա. Յակորի մէջ նախագահեց Հոգ. Տ. Կիրեն Ծ. Վրդ. Գարիկեան:

\* Եշ. 24 Յուլիս.— Ա. Թարգմանչաց Վարդապետացն մերոց՝ Սահակայ և Մեսրոպայ (Տօն ազգային): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց, ըստ սովորութեան, Ա. Թարգմանչաց Երկր. Վարժարանի Տեսուչը՝ Հոգ. Տ. Կիրեն Ծ. Վրդ. Գարիկեան:

\* Ծր. 26 Յուլիս.— Ա. Տրդատայ թագաւորին մերոյ և Աշխեն տիկնոջն և Խոսրովիդիստոյն: Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Հայկակը Վրդ. Պայրամեան:

— Նախատօնակին Ա. Յակորի մէջ նախագահեց Հոգ. Տ. Կիրեն Ծ. Վրդ. Գարիկեան:

\* Կիր. 27 Յուլիս.— Գիտ Տիգոյ Ա. Աստուածածնի: Ա. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ա. Աստուածածինի Տաճարին մէջ, Տիրամօր Ա. Գեղեգմանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտլարեան: Երթուղարձի թափօրներուն նախագահեց Հոգ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիկոսեան:

# ՊԵՏՈՆԵԿԱՐ




\* Բշ. 2 Յունիս.— Երեկոյեան, Խուալիոյ ազգային տօնին առիթով, խոալական ընդհ. հիւպատոսին կողմէ հիւպատոսարանին մէջ սարքուած ընդունելութեան ներկայ գունուեցան Աւագ Թարգման Հոգչ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան և Տիար Գ. Հինդեան:

\* Գշ. 10 Յունիս.— Ամերիկեան ընդհ. հիւպատոս Պրմ. Սրբիր Տէ, իր մեկնումին առիթով հրաժեշտի այցելութեան եկաւ Ամեն. Պատրիարք Ս. Հօր: — Նոյն օր, Պատրիարք Ս. Հօր այցելեց Միացեալ Ազգերու Կազմակերպութեան մօտ Խորայէլի ճոր նշանակուած ներկայացոցից՝ Պրմ. Հային Հերցոկ:

\* Դշ. 18 Յունիս.— Երեկոյեան, Անգլիոյ Թագուհիի ծննդեան 49րդ տարեարձին առթի, բրիտանական ընդհ. հիւպատոսին կողմէ հիւպատոսարանին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գունուեցան Հոգչ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան և Տիար Կ. Հինդեան:

\* Բշ. 14 Յուլիս.— Երեկոյեան, Ֆրանսայի ազգային տօնին առթի, ֆրանսական ընդհանուր հիւպատոսին կողմէ հիւպատոսարանի պարտէզին մէջ սարքուած ընդունելութեան ներկայ գունուեցան Հոգչ. Տ. Կիւրել Շ. Վրդ. Գարիկեան, Հոգչ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան, Հոգչ. Տ. Վահան Վրդ. Թօփալիան և Տիար Կ. Հինդեան:

\* Բշ. 21 Յուլիս.— Երեկոյեան, Պելճիքայի ազգային տօնին առթի, պելճիքական ընդհանուր հիւպատոսին կողմէ հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գունուեցան Հոգչ. Տ. Կիւրել Շ. Վրդ. Գարիկեան, Հոգչ. Տ. Վահան Վրդապետ և Տիար Կ. Հինդեան:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

---

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Յանուն Հայ Եկեղեցիի և Մշակոյթի	130
Ն. Ս. ՕՇՈՒԹԻՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՈՐՉԱԲԵՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԵՄ	134
Ժամանում Թուրքիոյ Հայոց Ամենապատիւ Պատրիարքին	135
Ժամանում Վեհափառ Հայրապետին Ամման	137
Ժամանում Վեհափառ Հայրապետին Երուսաղէմ	139
Բարի գալուստի այցելութիւններ	143
Ժամանում Ս. Աթոռիս Բարերար Կան. Տէր և Տէղ. Ալեքս Մանուկեաններու	143
Այցելութիւն Բեթղեհէմ	143
Ֆիլհարմոնիք Նուագահանդէս	149
Զանազան Այցելութիւններ	149
Բացում Ալեքս և Մարի Մանուկեան ժառանգաւորաց Կարժարանի Նորակառոյց Շենքին	149
Ընդունելութիւն Պատրիարքարանին մէջ ի պատիւ Կան. Տէր և Տէղ. Ալեքս և Մարի Մանուկեաններու	159
Ն. Ս. Օծութիւնը հիւր՝ Փրանչիսկեան Հայրերուն	159
Ամավերջ Հանդէս Ս. Թարգմանչաց Երկրու. Կարժարանի	161
Ժողովրդական Հանդէս ի պատիւ Ն. Ս. Օծութեան	161
Զանազան ժողովներ	163
Մեկնում Ս. Աթոռիս Բարերար Կան. Տէր և Տէղ. Ալեքս Մանուկեաններու	163
Մեկնում Բարերար Տիար Տատուր Տատուրեանի	165
Սարկաւագական Զեննադրութիւն	165
Հանդիսաւոր Նաւակատիք և Օծում Ս. Յարութեան Տաճարի Հայկական Խորաններուն	165
Ճաշկերոյթ ի պատիւ Վեհափառ Հայրապետին և Հայ հիւրերուն	167
Հայրապետական Սուրբ Պատարագ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ	167
Ճաշկերոյթ ի պատիւ Եկեղեցական դասին, հիւրերուն և Միաբանութեան	172
Այցելութիւն Հանրապետութեան Նախագահ Ն. Կան.	172
Էֆրայիմ Գարցիրին	176
Ընդունելութիւն Արար համայնքին կողմէ	176
Ընդունելութիւն Երուսաղէմի Դաւիթի Բերդին մէջ	177
Ճաշկերոյթ Պատրիարքարանի Դահլիճին մէջ	177
Վեհափառ Հայրապետին մեկնումը Ս. Քաղաքէն	178

Մեկնում Թուրքիոյ Հայոց Ամենապատիւ Պատրիարքին	179
Վեհափառ Հայրապետը Ամմանի մէջ	179
Վեհափառ Հայրապետը Յորդանանի Ծերակոյտի Նախագահին մօտ	179
Վեհափառ Հայրապետը Յորդանանի Նորին Վեհափառութիւն	
Հիւսէյն Թագաւորին մօտ	179
Ճաշկերոյթ ի պատիւ Ն. Ս. Օծութեան	180
Մեկնում Նորին Վեհափառութիւն Հայրապետին	180
Ն. Կսեմութիւն Տիար Ալեքս Մանուկեան — Բարերարը և իր գործը	181
Մեր Հիւսէրը	184
Տարեկան Դաշտահանդէս Ս. Թարգմանչաց Երկրո. Վարժարանի	186
Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ	
Եկեղեցականք - Բեմականք	187
Պաշտօնականք	190
Բովանդակութիւն	191

Yearly subscription: 10 U. S. Dollars

All correspondence should be addressed to:

Armen Kalaydjian, The St. James Press

P. O. Box 14001, Jerusalem — Israel